

Республика

Сибирь издается в 1913 г.
всесоюзный научно-исследовательский

1913

491.99-5
Р-88

Утилизация сырья

1913р.

491.99-5

Р-88

ՅԵՐԱԿԱՆ ԳՈՒՐԾԵՐՆԵՐՆ

Մ/

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶԻՒ

Հ Ա Մ Ա Խ Օ Տ

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԱՔՄԱՆ ԳԻՏԵԼՔՆԵՐՈվ ԵՒ ԴՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺԱԴԻԹՈՒՆՆԵՐՈվ

Խորթ
36247

Առօրին և միջին դպրոցներ համար

4-րդ սպազմորին

Совѣтомъ Попечителя допущена въ качествѣ учебника для высшихъ и среднихъ учебныхъ заведеній Кавк. Уч. Окр. (Журн. пост. отъ 26/II, 1911 г.; отнош. № 5452)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Խմբու. սպազմ և ՊՈԽԱ. Մատղեան փոք. № 8.
1913

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Դասագրքիս արագ սպառելը հնարաւորութիւն տւաւ
ինձ լոյս ընծայելու նոյնը չորրորդ հրատարակութեամբ, որը
գրեթէ անփոփոխ արտատպութիւն է երրորդից: Երկրորդ
հրատարակութիւնը բարեփոխելիս՝ իր ժամանակին նկատի
են առնւած այն ցուցմունքները, որ արել էր պրօֆեսոր
Ն. Մառը՝ Կովկասի Ուսումնարանական Շրջանի պ. Հոգա-
բարձի յանձնարարութեամբ: Այդ բարեփոխութիւնից յետոյ՝
աշխատութիւնս Կովկասի Ուսումնարանական Շրջանի Հոգա-
բարձական Խորհրդի կողմից (27-ն փետրվարի 1911 թ.,
և 5452) թոյլատրած է, որպէս դասագիրք ստորին և միջին
դպրոցների համար:

Քերականական դասընթացն աւելի գործնական դարձ-
նելու համար՝ դասագրքիս մէջ զետեղւած են զանազան
վարժութիւններ, որոնց շնորհիւ աշակերտը հիմնաւորա-
պէս իւրացնում է այս կամ այն կանոնը կամ լեզւական
առանձնայատկութիւնը: Սակայն այդ վարժութիւնները
զետեղւած են զլիսաւորապէս որպէս նմուշ դասատունների
համար: Ցանկալի և աւելի օգտակար է, որ այդ տեսակ
վարժութիւններն ամեն անգամ կազմւեն աշակերտների
նոր դասից ուսած յօդւածից կամ ոտանաւորից: Թէ հնչիւ-
նաբանական բաժնում և թէ իւրաքանչիւր բանի մասից
յետոյ՝ առանձին տեղ է տրւած ուղղագրութեան: Առանձ-
նապէս ուշադրութիւն է դարձրւած այն գէպքերի վրա,
որոնք յաճախ սխալ են պատճառում: Ուղղագրական ընդ-
հանուր գիտելիքների հետ միասին՝ ի միջի այլոց բացա-
տրւած են ե, և, ո, ը, յ, և, փ, դ, իս, ո, ր և այլ
տառերի գործածութեան կանոնները: և բերւած են այն յա-

113600-ԱՀ

ճախ գործ ածւող արմատական բառերը, որոնք գրւում են
եռով, օռով և յոռով:

Բայցի գրանից զրբիս վերջում կայ մի յաւելւած, որս
աեղ խօսւում է նախադասութիւնների տեսակների մասին:
իսկ նախադասութիւնների մանրամասն ուսումնասիրու-
թինը և նրանց կապակցութիւնները զետեղւած են իմ
«Համաձայնութեան» մէջ:

Որովհետեւ դասագիրքս որոշւած է պետական և հայոց
դպրոցների համար, որտեղ միաժամանակ անցնում են թէ
հայերէն և թէ ոռուսերէն քերականութիւն, այդ պատճառով՝
էլ, աւելի դիւրութիւն տալու համար՝ իւրաքանչիւր քերա-
կանական հայերէն տերմինից յետոյ փակագծում դրւած է
նրա ոռուսերէն թարգմանութիւնը:

Թիֆլիսի II իգական եւ IV արական
գիմնազիաների դասատոն՝

Յարուբիւն Թումանեան

ՀՆՉԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԵՐ

§ 1. Ամեն մի խօսք բաղկացած է առանձին
հնչիւններից. օրինակ՝ ծառ խօսքի մէջ ծ, ա, ո հըն-
չիւններ են (ՅՎԿԻ):

Հնչիւնների նշանագրերը կոչւում են տառ կամ
զիր (ԾԿՎԱ): Հնչիւններն արտասանւում են, իսկ տա-
ռերը՝ գրւում կամ տպւում. հնչիւնները լսւում են,
իսկ տառերը՝ տեսնում ու կարդացւում:

Հայոց լեզուն ունի 38 տառ՝ ա, բ, դ, դ, ե, զ,
է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, զ, ա, մ, յ, ն, շ,
ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ը, ց, ւ, փ, ք, օ, ֆ:

Բոլոր տառերի այս դասաւորութիւնը կոչւում է
այբբեն (ազբука):

§ 2. Հնչիւնները բաժանվում են երեք կարգի.

- 1) Զայնալորներ (гласные)՝ ա, ե, է, ը, ո, ու:
- 2) Բաղաձայններ (согласные)՝ բ, դ, դ, թ, թ,
ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, զ, ա, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս,
վ, տ, ը, ց, ւ, փ, ք, օ, ֆ:
- 3) Երկրարքառներ (двугласные)՝ եա, եօ, իւ (ю),
այ, ոյ (үй, ой):

Զայնալորներն արտասանվում են բաց բե-
րանով (ձայնով) և կարող են գործ ածւել մենակ:

Բաղաձայններն արտասանւում են բերանի զանազան մասերն իրար մօտեցնելով և գործ են ածւում միայն ձայնաւորների հետ միասին։ Իսկ երկբարբառները կազմում են երկու հնչիւնների միաւորութիւնից։

Յ տառը երբեմն հնչւում է, ինչպէս կիսաձայն ի (Ա), երբեմն՝ ինչպէս Գ, իսկ երբեմն էլ անձայն է մնում (§ 12, ա, բ, ե)։

Ի՞ գրւելով ե-ից յետոյ՝ կազմում է եւեւ։

§ 3. Մեր այբբենի տառերը, բացի հնչիւնական նշանակութիւնից, ունեն և թւական նշանակութիւն։ այսպէս, օրինակ՝ $a=1$, $b=2$, $c=3$, $d=4$, $e=5$, $f=6$, $g=7$, $h=8$, $i=9$, $j=10$, $k=11$, $l=12$, $m=13$, $n=20$, $o=21$, $p=22$, $q=25$, $r=29$, $s=30$, $t=40$, $u=50$, $v=60$, $w=70$, $x=80$, $y=90$, $z=100$, $aa=151$, $bb=200$, $cc=1000$ և այլն։

Վարժութիւն։—1. Արտակ եցէք հետեւալ ոտանաւորը, ձայնաւոր տառերի տակ բաղեցէք մի գիծ, իսկ երկբարբառների տակ՝ երկու գիծ։

Ծիծենակը բոյն էր շինում,
եւ շինում էր, և երգում.
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջւան բայնն էր յիշում։
Այժմ նորից բոյն էր շինում,
եւ շինում էր, և երգում.
Նա յիշում էր անցած տարին
իր սընուցած ձագերին,
Որոնց ձանպին յափշտակեց
Արիւնաբրու թշնամին։ Դագ. Ա.դ.

2. Հայոց տառերով զրկցէք հետեւալ։
18, 23, 24, 28, 33, 35, 37, 39, 46, 49, 61,
73, 82, 94, 101, 102, 125, 138, 567, 789, 1913,
2043, 3000։

ՎԱՆԿ ԵՒ ԲԱՌ

§ 4. ա) Խօսքի այն մասը, որ միանդամից է արտասանւում, կոչւում է վանկ (ԸՈՐԳԵ)։ Վանկը կազմում է մի կամ մի քանի հնչիւնից։ Առանց ձայնաւորի չի կարելի վանկ կազմել։ Սեղան, աշակերտ, ուսումնականներ։

բ) Եթէ բառի սկզբում կան երկու կամ աւելի բաղաձայն տառեր, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից յետոյ գրւում է ը ձայնաւորը։ Գլուխա, ժըպիտ, թըռչուն, տրրտմել։

գ) Եթէ բառի վերջում կայ ն կամ ը, վանկելու ժամանակ այդ տառերը կից բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում։ Բեռլին, դուռըն, մեղը, փոքը, ծանըր։

Վարժութիւն։—Վանկեցէք հետեւալ բառերը.

Քանոն, տեսրակ, թանաք, զբիչ, սենեակ, պայուսակ, թշնամի, կրկնութիւն, գրչահատ, տուաւոտ, եկեղեցի, հիւրասիրել, ընտանիք, իմաստութիւն, օրիորդ, օրացոյց, աշակերտուհի, ովկիանոս, Մարիամ, դառն, խառն, մանր, կարծր, կայսր։

§ 5. Մէկ կամ աւելի վանկը, որ իր մէջ պարունակում է մի որեկից միտք կամ նշանակութիւն,

կոչւում է բառ (слово): — Զի, տուն, սեղան, մատիտ,
թանաքաման.

Վանկերի թւին նայելով՝ բառը լինում է.

1) Միավանկ (односложное), ծառ, կով, ուլ,
քար, մարդ:

2) Բազմավանկ (многосложное), յատակ, պա-
տուհան, աշխատասիրութիւն:

§ 6. Բառի այն մասը, որ անփոփոխ է մնում
և պարունակում է իր մէջնրա բուն նշանակութիւնը,
կոչւում է արմատ (корень). օրինակ՝ խօսել, անխօս,
խօսք, խօսելիք բառերի մէջ խօս արմատ է:

Բառի այն մասը, որ գրւած է արմատից յետոյ, կոչ-
ւում է վերջաւորութիւն (окончание). օրինակ՝ խօսել,
խօսելիք բառերի մէջ ել, ելիք վերջաւորութիւններ են:

Իսկ բառի այն մասը, որ գրւած է արմատից
առաջ, կոչւում է նախածանց (приставка). օրինակ՝
անխօս բառի մէջ ան նախածանց է:

Արմատական բառը կոչւում է նախատիպ (пер-
вообразное): Իսկ եթէ նախատիպ բառը սկզբից կամ
վերջից մասնիկներ է ընդունում, կոչւում է ածան-
ցնալ (производное). օրինակ՝ հայր նախատիպ բառ
է, իսկ անհայր, հայրական, հայրազար, հայրենիք՝
ածանցեալ:

Վարժութիւն: — Հետեւեալ նախատիպ բառերից կազմեցէք
ածանցեալ բառեր.

Դիր, ջուր, տուն, դաշտ, մարդ, ոլորի, մայր, քաջ, սէր,
հողի:

§ 7. Բառը կազմութիւնով լինում է:

1) Պարզ (простое), որ միացած չէ ուրիշ բա-
ռի հետ: — Սեղան, տուն:

2) Բարդ (сложное), որ երկու կամ աւելի բա-
ռից է կազմւած: — Սեղանատուն, բարեկամ, առու-
տուր:

Խնչպէս տեսնում ենք, բարդ բառերը կազմւում
են ա, ե, ու յօդակապ տառերի օգնութեամբ:

Ծանօթ. — Այդ յօդակապներից ա և ե ձայնաւորները
կազմում են նախընթաց բառերի բնի վերջին մասը, իսկ
ու-ն շաղկապ է:

Մի քանի բարդ բառեր չ'ունեն յօդակապներ: —
Հացթուխ, ջրկիր, ձեռնտու և այն:

Վարժութիւն: — Կազմեցէք բարդ բառեր հետեւեալ բա-
ռերից:

Գունդ—զօրք, տուն—ժամ, սիրտ—բարի, գիրք—վա-
ճառել, մտնել—լոյս, հանել—պատ, հիւր—սիրել, սէր—մարդ,
աստիճան—բարձր, պետ—խումբ, թուր—մուր, կեր—խում:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԵԾԱՏԱՐ

§ 8. Ամեն մի տառ գրւում է կամ տպւում երկու ձեռվ՝ մեծատառ (прописная) Ա, Բ, Գ... և փոքրատառ (строчная) ա, բ, գ...

Մեծատառով սկսւում են.

ա) Յատուկ անունները: — Մարդարիտ, Լիոն, Եփատ, Թիֆլիս, Մասիս:

բ) Ամեն նոր գրութեան առաջին բառը: — Զմեռն էր: Տատին Ձշապատեցին թոռները և խնդրեցին, որ մի հէքիաթ ասի: Նա սկսեց: Դ.գ. Ա.դ.

գ) Ոտանաւորի ամեն մի տողի առաջին բառը: —

Մարի Գլխին տիսուր ժպտաց
Հարաբաղի արել,
Ջրաբերդի անտառներին
Տըւաւ վերջին բարել: Յար. Թում.

ծ ա ն օ թ. — Ոտանաւորի տողերը սկսւում են նաև փոքր տառով:

դ) Քաղաքավարական գրութեան մէջ Դուք, Զեր, Զեզանից...բառերը, սրբազն անուններն ու տիտղոսները: — Արարիչ, Փրկիչ, Նորին Մեծութիւն, Վեհափառ Տէր:

ե) Գրւածքների և պարբերական թերթերի անունները: — «Կուածաղիկ» ու «Հացի ինդիր» վէպերը զրել է Պետք Պոօշեանը: «Մշակը» լրագիր է: «Աղբիւրն» ու «Հասկերը» մանկական ամսագրեր են:

Ե, Է

§ 9. Ե բառի սկզբում հնչւում է, ինչպէս կարճ իէ (Ես, Երկու, Եղբայր), իսկ բառի միջին՝ է (մեծ, գիշեր, ձեռներ):

ա) Բառերի վերջում և չի գործ ածւում, այլ գրւում է է: — Նունէ, Եւզինէ, գուցէ, միթէ, ըոպէ, մարգարէ:

բ) Բառերի միջին մեծ մասամբ գրւում է ե, իսկ է ըիչ է գործ ածւում: Ուղղագրութեան համար պէտք է սովորել է-ով գրւող բառերը:

է-ով գրւում են հետեւեալ յաճախ գործ ածւող բառերը.

Արդէն	Գոմէշ	Խէթ	Նւէր	Վէր (Վայր)
Աղէտ	Դէզ	Խէժ	Շէկ	Վէռք
Աղւէս	Դէժ	Ծէս	Շէն	Վըշէ
Անէծը	Դէմք	Կէս	Պատմէն	Տղէտ
Անօրէն	Դէս, դէն	Կէտ	Պատնէշ	Տէր
Ապաւէն	Դէպի	Հանդէս	Պատւէր	Տնօրէն
Առնէտ	Դէպք	Հէդ	Պարտէզ	Փէշ
Ասպարէզ	Դէտ	Հրաւէր	Պէս	Փոխարէն
Բզէզ	Երէց	Հրէշ	Զրվէժ	Բարտէզ
Բէէն	Զէնը	Զէթ	Սէր	Բէն
Գէթ	Թէկուղ	Մէգ	Վէճ	Օրէնք
Գէս	Թէպէտ	Մէկ	Վէպ	
Գէր	Ժապաւէն	Մէջ	Վէտ-վէտ	

գ) Է-ով գրւում են այն յատուկ անունները, որոնք վերջանում են էլ, էս, էն: — Միթայէլ, Խորայէլ, Ռաֆայէլ, Յովհաննէս, Ներսէս, Խորէն, Ռուբէն, Գուրգէն, Կայէն, Սուրէն և այլն:

գ) Եռվ զրւում են այն բառերը, որոնք ունեն
հետեւալ վերջաւորութիւնները.

Աշու՝ հոտաւէտ, գինեւէտ, խոտաւէտ:
թէն՝ հայերէն, ոռւսերէն, համօրէն, փոխարէն:
դէն՝ ոսկեղէն, մրգեղէն, հողեղէն:
պէս՝ այսպէս, այդպէս, այնպէս, վերջապէս:
էլ՝ երեխէք, Զրօրնէք, եկէք, գնացէք:

Ինչպէս տեսնում ենք, է զլխաւորապէս զրւում
է բառերի վերջին վանկում: Բայց կան բառեր, որոնց
վերջին վանկում զրւում է ի:—Այսուեղ, այնտեղ, ա-
հեղ, զօրեղ, հանճարեղ, ասես, ուտես, տեսնես, խօ-
սել, տանել, ծառեր, աշակերտներ և այլն:

Ե) Բառերի միջին՝ ձայնաւորից առաջ սովորա-
բար զրւում է ի:—Խօսէի, խօսէիր, խօսէինք, խօսէ-
իք, խօսէին, մարգարէանալ, միջօրէական, ըովէա-
կան, քրիստոնէութիւն, Թաղէոս, Մատթէոս, Գէորգ
և այլն:

Վարժութիւն:—Արտագրեցէք հետեւալ յօդւածը և խա-
չերի տեղ, ուր հարկաւոր է, գրէք և կամ և.

×կ×լ ×ը գարունը: Աշխնան ու Արբստակլ×սը շատ
ուրախ քին: Բոլոր չը×իւքը գնացին պարտ×զը: Տանը
միայն մնաց Գայշիան×ն: Նա դ×ռ պիտի պատրաստ×ը իր
հայքր×ն դասը: Արքակը ժպտում չը վ×րից ու հրա-
ւքը կարգում նրան: «Միթէ բաւական չ×, ինչքան պարա-
պման: Դուրս չկ, աչս ինչպիս ուրախ չը պարտիզում,
աչս ինչ հոտաւչտ ծաղիկն չը ու ինչ կանաչչաղն չը
կան»:—Ոչ, պայծառ արքէիկ, մինչչւ գործքը չը վ×ր-
ջացն չմ, չս չք կարող աչզից շարժւչւ: Վերջապիս
Գայշիան սովորչց դասը, չլաւ սչնեակից ու դիմչց
ու պի պարտք:

§ 10. Ո բառերի սկզբում կարդացւում է ու,
ինչպէս՝ ոտ, որք, ոսկի, որդի:

Բացառութիւն են կազմում ով, ովկիանոս, ով-
սաննա և այլն, ուր վ-ից առաջ ո հնչւում է օ:

բ) Բառերի միջին ո հնչւում է օ:—Նոր, ձոր,
բոլոր, հողոտ:

գ) Բառերի վերջում ո մենակ չի մնում, այլ ըն-
դունում է յ:—Յետոյ, սիրոյ, երեկոյ, Աստուծոյ:

Բացառութիւն են կազմում այր և քո բառերը:

Բառերի վերջում օ սակաւ է գործ ածւում:—
Տօ, օհօ, ծօ, Մկօ, Մարօ, Մարգօ, Խէչօ, Կարօ:

դ) Բառերի միջին մեծ մասամբ զրւում է ո,
իսկ օ քիչ է գործ ածւում: Ուղղագրութեան համար
պէտք է սովորել ջռվ զրւող բառերը:

Օռվ զրւող բառերից յաճախ գործ են ածւում սրանք:

Ակօս	Դրօշակ	Կարօտ	Մօտ	Ոսկեգօծ
Աղօթք	Եօթը	Կրօն	Մօր (մայր)	Պաշտօն
Աղօտ	Եղբօր	Կօշիկ	Մօրուք	Պօղոս
Ամօթ	Զքօսնել	Համառօտ	Յօդւած	Աօս, սօսի
Անօթ	Զօրք	Հետազօտել	Յօժար	Վաղօրօք
Անօթի	Թօշնել	Հզօր	Յօնք	Վառօդ
Առաւօտ	Իրօք	Հօտ	Յօրանջել	Տօթ
Արգեօք	Խելօք	Հօտաղ	Յօրինել	Տօն
Արօտ	Խօսք	Հօր	(հայր) Նախօրօք	Տօղ
Արօր	Ծանօթ	Հօն	Նարօտ	Օրօր
Բօթ	Ծզօտ	Ղօղանջել	Նօսր	
Դօտի	Ծնօտ	Ճօճափել		

Բառերի ածանցման ու բարդութեան ժամա-
նակ օ մնում է անփոփոխ:—Աղօթք, աղօթել, աղօ-

թասէր: կրօն, անկրօն, կրօնական, կրօնուսոյց,
կրօնասէր,

Վարժուքին:—Արտագրեցէք հետևեալ յօդւածը և խա-
չերի տեղ, ուր հարկաւոր է, դրէք ո կամ ո:

Մի քը չձը ո զալչվ եկաւ ՀասԽ անոնչվ գիւ-
ղացու մշտ և նշրա հետ սկսեց խսել. «Բարի գրացի,
այսԽրւանից եկ ապրենք եղբքը պէս. էլ չչ դու ինձանից
և չչ ես քեզանից չը վախենանք, Խքրիս փԽխել եմ, էլ
ծուռ ճանդչվ չեմ ո զալու, չչ քի վասս չեմ տալու»:—
Թէպէտ նշր է ք կաշին, ասաց ՀասԽն, բայց հաքիդ
առաջւանն է: Ասաց ու մէկ հարւածչվ գլքրեց նշրան:
Յետոյ ապահչվ սկսեց արքը քվ խքր ակամեր ծրել հա-
զի մէջ, վարել, ցանել, քը վերջը ցքրենչվ լցնի իր հաքը.

Ը

§ 11. ա) Ը ձայնաւորը բառի սկզբում և վեր-
ջում միշտ գրւում է:—Ընկեր, ծառը:

բ) Բառերի միջին բաղաձայնների մօտ, ուր լը-
ւում է ը, սովորաբար չի գրւում. օրինակ՝ լաւում
է զըրել, զըրկել, թըշնամի, մըթմըթալ, երկնըի,
խորհըրդի, բայց գրւում է՝ զրել, զրկել, թշնամի
մըթմըթալ, երկնըի, խորհըրդի:

Բայց տողադարձի ժամանակ այդ բառերի մէջ ո
ձայնաւորը գրւում է՝ (§ 4, բ):—Գը-րել, զըր-կել,
թըշ-նամի, մըթ-մըթալ և այլն:

գ) Բարդ բառերի միջին, երբ երկրորդ բաղա-
զրիչ մասն սկսւում է ը-ով, գրւում է ը:—Հատընտիր,
նորընծայ, դասընկեր, խոչընդուռ, ճակընդեղ:

դ) Բառերի սկզբում ստ, սպ, սկ, սք, սփ, սթ,

զզ, զը, շտ կապակցութիւններից առաջ լաւում է
կարձ ը, բայց չի գրւում:—Ստուգել, սպասել, սկսել,
սքանչելի, սփոփել, սթափւել, զգոյշ, զրօննել, շտափել:
Բացառութիւն են կազմում սփոնել, շփոթ և այլն:

Յ

Արք պահ

§ 12. ա) Յ բառի սկզբում կարդացւում է հ:—
Յատակ, յայտնի, յիսուն, յարմար:

Բառերի սկզբում յ համեմատաբար աւելի քիչ է
գրւում, քան թէ հ: Ուզդագրութեան համար պէտք է
սովորել յ-ով սկսող բառերը:

Յ-ով սկսող բառերից յաճախ գործ են ածւում սրանք.

Յակինթ	Յաշորդ	Յարութիւն	Յղանալ	Յորձանք
Յաղթել	Յառել	Յաւելած	Յղկել	Յունիս
Յաճախ	Յարեաւ	Յաւէտ	Յօրեկեան	Յուլիս
Յամառ	Յասմիկ	Յափտեան	Յունակի	Յունաշ
Յայտնի	Յատակ	Յափշտակել	Յոգնել	Յուշարար
Յանդ	Յատուկ	Յեղաշրջել	Յուզել	Յստակ
Յանդիման	Յարատեն	Յենել	Յոյժ	Յօդյօթւած
Յանդուգն	Յարգել	Յետ (ետ)	Յոյն	Յօժար
Յանկարծ	Յարդ	Յիմար	Յոյս	Յօնք
Յանձնել	Յարկ	Յիշել	Յովուզ	Յօրանչել
Յանցանք	Յարձակել	Յիսուռն	Յորդ	Յօրինել
Յաշող	Յարմար	Յիրաւի	Յորդութել	

Բառերի ածանցման ու բարդութեան ժամանակ
յ մնում է անփոփոխ:—Յաղթել, անյաղթ, յաղթա-
կան, յաղթանդամ:

~~Յաղթանդամ~~ Բացի սրանից Յ-ով գրւում են շատ յատուկ

անուններ:—Յիսուս, Յուդա, Յովհաննէս, Յովհէփ,
Յակոբ, Յովհան և այն:

բ) Բառի միջին և վերջին յ կարդացւում է, ինչ-
պէս կէս ի (ն):—Այդի, հայ, թէյ, նոյ:

գ) Բառի վերջում ա և ո ձայնաւորներից յետոյ
սովորաբար գրւում է յ :—Ծառայ, երեխայ, գայ,
կայ, երեկոյ, յետոյ, սիրոյ:

Բացառութիւն են կազմում.

1. (Դու) ասա, կարդա, գնա, խաղա...
2. Սա, դա, նա, որա, դրա, նրա, սոքա, դոքա,
նոքա, սոցա, դոցա, նոցա, իրա, քո:
3. Ահա, հիմա, ապա, աշկարա, այս:
4. Յատուկ անունները՝ Աղելայիդա, Աննա, Յու-
դա, Մուսա, Մոսկա:
5. Օտար անունները՝ Փաշա, Բօշա, դրամա,
պիեսա:

դ) Յ վերջացած բազմավանկ բառերը, երբ իրան-
ցից յետոյ ընդունում են ս, դ, ն, ներ՝ կորցնում են
յ գիրը:—Ծառաս, ծառադ, ծառան, ծառաներ:

ե) Յ կարդացւում է միայն միավանկ բառերի
վերջում:—Հայ, բայ, թէյ, նոյ:

Բացառութիւն են կազմում՝ կայ, գայ, տայ, լայ
և այն:

Իսկ բազմավանկ բառերից յետոյ յ համբ է մնում:
օրինակ՝ ծառայ, երեխայ, յետոյ, երեկոյ կարդաց-
ւում է՝ ծառա, երեխա, յետո, երեկո:

զ) Յ գրւելով աև ո ձայնաւորից յետոյ՝ կազմում
է այ և ոյ (յայ, օյ) երկբարբառները (§ 2, 3):—Զայն,
հողբայր, լոյս, դոյն, հոյտակապ, նոյեմբեր:

է) Յատուկ անունների և օտար բառերի վերջին
ա-ից յետոյ յ չի գրւում. իսկ եթէ գրւում է, կար-
դացւում է:—Արփաչայ, Գեօդչայ, Շանխայ, տրամ-
ւայ, հարայ:

Վարժութիւն:—Գրեցք թելաղբոթեամբ հետեւելը.

շ) Յունիսը և յուլիսը ամառային ամիսներ են: Յարէթը
Կոյի որդին էր: Ախուրեանի միւս անունն է Արփաչայ: Յա-
կորը Յովհէփի հայրն էր: Աստուծոյ պահած գառը զայլը
չի տանիր: Համբարձումը կարդաց մի հայերէն պօչմա, որ
կոչում է «Դալի-Մահերաստ»: Աննա, գնա Յովհակիմին ասա,
որ գայ այստեղ, յետոյ եկ, քեզ մի ընծայ տամ: Մայր ցա-
մաքը հինգ է՝ Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աս-
տրալիա: Աշխարհն ունի չորս կողմ՝ արևելք արևմուտք,
հիւսիս և հարաւ: Այսօր տեսայ մի քահանայ: Տէր-Յովհան-
նէսը մեր քահանան է: Մի երեխայ իր հօր հիտ այգուց յետ
էմ գալիս տուն: Ահա քո երեխաները կնում են:

ի, կ

§ 13. ա) և կ հնչւում են միատեսակ: Սրան-
ցից վ գրւում է միայն բառի սկզբում և ո ձայնա-
ւորից յետոյ (վարդ, վերք, ծով, խոռվել). իսկ միւս
գեպըերում գրւում է ւ:—Հաւ, թեւ, թիւ, հիւսնդ,
հաւատ, առաօտ, զինլոր, առւակ:

Բարդ բառերի մէջ երկրորդ բաղադրիչի սկզբի
վ տառը մնում է:—Վարդավառ, օրավար, գրավա-
ճառ, արագալագ:

բ) Բառի սկզբում ո-ից առաջ վ չի գրւում:—
Որդի, որբ, ուկի, որսորդ:

շ) ւ գրւելով ի ձայնաւորից յետոյ, կազմում է
իւ (յո) երկբարբառը (§ 2, 3):—Խող, իր, հիւր, գիւր:

Իւ կարգացւում է իբրև յօ բառի սկզբում և արմատական բաղաձայնի առաջ (իւզ, հիւսն). իսկ բառի վերջում և ձայնաւորի առաջ կարդացւում է իվ (թիւ, հիւանդ):

գ) ւ որւելով ո ձայնաւորից յետոյ, կազմում է ու (յ): — Ուզա, ուլ, թուղթ, ջուր, կատու, լեզու:

ե) Ու երբեմն գործ է ածւում ձայնաւորից առաջ և տառի փոխարէն: — Աստուած, առուակ, նուէր, զուարթ:

Բայց այս ձեւը մեր այժմեան լեզում համարեա վերացել է, և ու-ի տեղ՝ գրւում է ւ: — Աստուած, առակ, նուէր, զուարթ:

Վարժարին: — 1. Արտազրեցէք հետեւալ բառերը և խաչեր փոխարէն, ուր հարկաւոր է, զրեցէք վ կամ և:

Խանք, Խանան, ցախ, կոխ, զիշան, տեսախ, պառախ, բարսխ, մատիտախ, գրքոխ, զօրախար, զօրախոր, Խարդապետ, Խառակ, պատհի խ, առախօտ, ախակ, բոցախաւ, ախետիս, թագախոր, բանխոր, մրգախառա, հաշիխ, հոչիխ, տերեխ, ձեխ, անձրեխային, թեխախոր:

2. Քրեցէք թեւադրութեամբ հետեւալը.

Ծիտը ծառին ծըլւըլում է, ծիւ, ծիւ, ծիւ,

Բազէն զլմին պըտըտում է, վնչյ, վնչյ, վնչյ.

Ծիտը լոեց, ծիսալ վախեց, վայ, վայ, վայ,

Բազէն թառւ, բազէն փախաւ, ինչ լաւ էլաւ, հէ, հէ, հէ:

Պ. Աղ.

Վարդանն ու Վաղարշակը մի օրավար հող վարեցին: Որսորդը հրացանով մի վարաւ սպանեց: Հովկի անկողինը: Վահան վարդապետը առաւօտեան նաւակով ուղերդեց առ Սևանու վանըը: Զօրավարը քաջակերում է զինւաքներէն:

Ղ, Խ

§ 14. ա) Ղ բաղաձայններից առաջ սովորաբար հնչւում է իւ. օրինակ՝ զրւում է թուղթ, աղբատ, կեղտ, բայց կարդացւում է թուլխթ, ախբատ, կեխտ:

բ) Բաղաձայններից առաջ սովորաբար գրւում է դ, իսկ իւ շատ քիչ է գործ ածւում:

Խ բաղաձայններից առաջ զրւում է հետեւալ բառերում՝ ախտ, անխախտ, բախտ, երախտիք, ուխտ, ապուխտ, զմրուխտ, պանդուխտ, վախճան, ժխտել, Շանդուխտ, Խոսրովիդուխտ:

զ) Ղից յետոյ ը հնչւում է ինչպէս պ: — Աղբիւր, եղբայր, ողբալ:

Ո, Ռ

§ 15. ա) Ուտառը հնչւում է կոշտ, իսկ ը՝ փափուկ: Ու սովորաբար գրւում է ն բաղաձայնից առաջ: — Թուն, բուն, նուն, լեռնային, մեռնել, գառնութիւն, խառնուրդ:

Միւս բաղաձայններից առաջ գրւում է ը: — Վարդ, բարձ, ախտ, կարճ, զարդ:

Բացառութիւն են կազմում ուռկան, ուռճանալ, խոպոտ, կառք, կուռք և այլն:

բ) Կրկնութիւնով կազմւած բառերի մէջ առաջին ուն՝ ընկնելով բաղաձայնից առաջ, ը-ի է փոխւում: — Բարբառ, մրմուռ, գրգիռ, կրկուալ, թրթուալ:

Բայց երբ հարկաւոր է ցոյց տալ ձայնի սաստկութիւն, երկուսն էլ ո է գրւում: — Մոմոալ, ճըռճառալ, կոկոալ:

Բ, Գ, Դ, Զ, Զ

§ 16. Ռ տառից յետոյ թ, գ, դ, ջ հնչւում
են՝ փ, ք, թ, շ, չ օրինակ՝ որը, Սարզիս, Վարդան,
բարձր, մըջին կարգացւում են՝ որի, Սարքիս, Վար-
ծան, բարցր, մըջին:

Բ, գ, դ, ջ տառերը հնչւում են իբրև փ, ք,
թ, շ, չ նաև հետեւեալ դէպքերում.

ա) Ձայնաւորից յետոյ:—Գրաբար, թագաւոր,
օդ, օձ, էջմիածին:

բ) Այ, ոյ երկրաբառներից յետոյ:—Այբբեն, այ-
գի, գոյգ, մոյց.

գ) Երբեմն մ, ն բաղաձայններից յետոյ:—Համ-
բուրել, անգամ, անլամ:

ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 17. Բառերի մասերը մի տողից միւսը վոխա-
զըելու համար՝ պէտք է գիտենալ տողաղարձի կա-
նոնները (правила переноса):

Այդ կանոնները հիմնւած են բառերի վանկելու
վրա և սրանք են.

ա) Երկու ձայնաւորից մէկը մնում է առաջին
տողում, իսկ երկորդը փոխադրւում է միւս տողը—
Լի-ազօր, մի-աբան, տի-եղերք:

բ) Երկու միատեսակ բաղաձայններից մէկը մը-
նում է առաջին տողում, իսկ միւսը փոխադրւում է
միւս տողը:—Սեղան-ներ, տիկին-ներ, այբ-ըեն:

գ) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ մի բաղաձայն,
վերջինս անցնում է հետեւեալ տողը:—Հո-գի, տա-ըի:

դ) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երկու բա-
ղաձայն, վերջիններս իրարից բաժանւում են:—
Ար-դար, գառնուկ:

ե) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երեք բա-
ղաձայն, միայն վերջին բաղաձայնն է փոխադրւում
միւս տողը:—Պաշտ-պան, քաղցրութիւն:

զ) Եթէ բառի մէջ երկու կամ երեք բաղաձայնի
մօտ լսւում է լ, տողադրձի ժամանակ այդ գիրը
գրւում է (§§ 4, բ. 11, բ.):—Գլուխ, թըշ-նամի,
դա-սլն, մա-սին:

է) Երկրաբառների գրերը տողադրձի ժամա-
նակ միմեանցից չեն բաժանւում:—Հայ-րիկ, գիւղում:

Տողադրձի նշանը կոչւում է ննթամնայ (-).
աս գրւում է առաջին տողի վերջին:

Վարժութիւն:—Խնչպէս պէտք է վանկել հետեւեալ բա-
ռերը տողադրձի ժամանակ.

Բարի, որդի, աշակերտ, աշակերտունի, էութիւն,
այգի, գոյութիւն, Հայաստան, միասին, որդիական, տներ,
էրիչ, երկնքի, խորհրդաւոր, նշաններով, ամաններ, բարձր,
բարձրանալ, կրկնել, ընտանիք, ընկեր, թրիկթրիկալ, գրէի,
խօսեին, գիւղացի, մտերիմ, հարստանալ, սպասել, շտապել,
շփոթել, սփոել, զբաղւել, սպասանալ, զգուշանալ

ՆԱԽԱԴԱՐՁԻ ՄԻԱՅՆ

§ 18. Ամեն մի առանձին միաբ, որ արտայայ-
տում ենք բառերով, կոչւում է նախաղասութիւն
(предложение):—Աշակերտը գրում է: Եկաւ գարունը:
Օքը տաք է: Սոխակը թոշուն է:

Նախաղասութեան մէջ երկու գլխաւոր անամ-

ներ (главные члены) կան՝ ա) ևնթակայ (подлежащее) և բ) ստորոգեալ (сказуемое):

ա) Ենթակայ կոչւում է այն գլխաւոր առարկան, որի մասին խօսւում է նախադասութեան մէջ:—Աշակերտը, դարունը, օրը, սոխակը:

բ) Ստորոգեալ կոչւում է այն, ինչ որ ասւում է ենթակայի մասին:—Գրում է, եկաւ, տաք է, թըռչուն է:

Ենթական պատասխանում է ո՞վ և ի՞նչ հարցերին, իսկ ստորոգեալը՝ ի՞նչ է անում, ի՞նչ արաւ կամ ի՞նչ կ'անի առարկան, ի՞նչ է լինում, ի՞նչպէս է, ի՞նչ է և այլն:

Ենթական ստորոգեալից ոչ մի կէտադրութեան նշանով չի բաժանւում: Նախադասութեան վերջում դրում է զերջակէտ (։):

Վարձուքին:—Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները, քաշեցէք ենթականների տակ մի գիծ, իսկ ստորոգեալների տակ՝ երկու գիծ:

Եւ չը խօսեց Արագսը, յորձանք տւեց ահազին, Օղակ-օղակ օձի պէս՝ առաջ սողաց մոլեգին: Ո. Պատ.

Գեղեցկանիստ է Աշտարակ,
Շատ այգիներ նա ունի.
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի:
Այդ սիրուն գիւղն ունի մի գետ,
Եւ այն լի է ձկներով: Ս. Շահ.

§ 19. Բացի գլխաւոր անդամներից, նախադասութեան մէջ լինում են երկրորդական անդամներ

(второстепенные члены), որոնք են՝ ա) որոշող կամ յատկացուցիչ (определение), բ) լրացուցիչ (дополнение) և գ) պարագայական բառեր (обстоятельственные слова):

ա) Որ շողկամ յատկացուցիչ բառերը պատասխանում են ի՞նչպիսի կամ ո՞ւղիսի, ո՞ւմ, ի՞նչի, քա՞նի, ո՞ր հարցերին:—Եղբայրս լաւ (ի՞նչպիսի) մարդ է: Յարէթը նոյն (մում) որդին էր: Ծովի (ի՞նչի) ջուրն աղի է: Ես ունիմ երկու (քանի) գիրք: Մարդարիտը առաջին (մը) գասարանումն է, միջին (որ) քաղաքը մեծ է:

Վարձուքին:—1. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք յատկացուցիչ բառերը և տակը զիծ քաշեցէք.

Օձի կծածը կը սաղանայ, լիզի կծածը չի սաղանալ: Ծերանաս, ծերի պատիւն իմանաս: Սուրբ Մեսրոպը ծարօն գւատիփ Հացիկ գիւղիցն էր: Մասիսը Հայաստանի ամենաբարձր սարն է: Նրա զագաթը ծածկւած է ձիւնով: Մեր երկիրը կոչւում է Կովկաս: Յակոբն ուն էր տասներկու որդի:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն յատկացուցիչ բառեր:

բ) Լրացուցիչ բառերը պատասխանում են՝ ո՞ւմ, ի՞նչ (ը), ի՞նչի (ը), ումնի (ը), ի՞նչի (ը), ումնով (ը), ի՞նչով (ը) հարցերին:—Հայրը սիրում է որպիւն (մում): Եղբայրն սացաւ նամակ (ի՞նչ) իր քրոջից (ումնից): Ծնողները միխթարւում են ի քանց զաւակներով (ումնով): Նա գրում է մատիտով (ի՞նչով):

Վարձուքին:—1. Գտէք լրացուցիչ բառերը հետեւալ սատնաւորի մէջ.

Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին:

Այժմ զուրկ է ամեն բանից,
Չունի անգամ հացի դիս:
Ամենայն օր իր մարմինը
Անուշահոռ ջրերով
Լւանում էր, մազը սանրում
Կրիայի նուրբ սանրով: Մ. Նալ.

2. Հետեւալնախաղասութիւնների մէջ ամեն մի ստորոտիւնի մօտ դրէք լրացուցիչ բառ:

Ուսուցիչը պատմում է (ինչ): Կայէնն սպանեց (մւմ): Հարուստն օգնում է (մւմ): Աշխատասէրն արժանի է (ինչի): Գրատախտակի վրա գրում են (ինչով): Աղքատը զորկ է (ինչից): Երեխան ընծայ ստացաւ (ումնից): Հայրը մօտեցաւ (մւմ): Դաշտը զարդարում է (ինչով):

Դ) Պարագայական բառերը ցոյց են տալիս գործողութեան՝

1. Տնղը պատասխանելով ո՞րտեղ, ո՞ւր, ո՞րտեղից հարցերին: — Դիւզացին աշխատում է ղաշտում (մրտեղ): Նա դաշտից (մրտեղից) գնումէ տուն (մւր):

2. Ժամանակը՝ պատասխանելով ն՞րբ, մինչեւ ե՞րբ, ո՞րքան ժամանակ, ո՞ր ժամանակից հարցերին: — Մայիսին (երբ) բացւում է վարդը: Առաւօտից (մը ժամանակից) մինչեւ երեկոյ (մինչև երբ) նա կարդում էր:

3. Որպիսութիւնը՝ պատասխանելով ի՞նչպէս, ի՞նչ տեսակ հարցերին: — Սոխակը երգում է անուշակ (ինչպէս):

4. Պատճառը և նպատակը՝ պատասխանելով ի՞նչու, ի՞նչի՞ համար, ի՞նչի՞ց հարցերին: — Աշակերտն իր ջանասիրութեան համար (ինչի՞ համար, ինչու) պար-

զկ ստացաւ: Զկնորսը գնաց ձուկ սրնելու (ինչու): Չուրը սառչում է ցըտից (ինչից):

Պարագայական բառերը միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանւում:

Վարժութիւն: — 1. Գտէք պարագայական բառերը հետեւեալ նախադասութիւնների մէջ:

Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ, Հին-հին դարուց յիշատակ ալեաց մէջը պարում եմ: Ո. Պո.

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր: Մեսրոպ գտաւ հայոց տառերը 406 թւին:

Առաւօտեան ամենքը գնում են իրանց գործին: Անձրւ օրը հաւերին ջուր տուղ շատ կը լինի:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն պարագայական բառեր:

Նախադասութեան մէջ լինում են նաև կոչական բառեր (звательные слова), որոնք ցոյց են տալիս՝ թէ մեմն է գիմում խօսողը: — Հայր մեր, Որ երկընքումն ես: Տք. Աղբը: Գնա՛, որդեա՛կ, աշխարհս անցիր, անպծ ալի անուն մեծի դու ստացիր: Ո. Պո.

Երբ կոչական բառը գրւած է նախադասութեան սկզբում կամ վերջում, միւս անդամներից բաժանւում է ստորակէտով (,). Իսկ երբ գրւած է նախադասութեան միջում, երկու կողմից է ստորակէտառնում:

Կոչական բառերի գլխին դրւում է շեշտ (): — Հայր, որդեակ:

Շեշտը դրւում է նաև հրաման կամ խնդիր պարունակող բառերի վրա: — Գնա՛, անց՛ը, ստացի՛ր:

Վարժութիւն: — Հետեւալնախադասութիւնների մէջ գտէք

կոչական ու հրաման կամ խնդիր պարունակող բառերը և
դրէք, ուր հարկաւոր է, շեշտ ու ստորակէտ.

Արի զու արի սիրուն նոր տարի նոր օրեր բեր մեզ,
Եկէք երեխէք եկէք ձեռք ձեռքի տանք պար բոնենք. Արե
արև եկ եկ զեզի բարին վէր եկ. Մանիր մանիր իմ ճա-
խարակ մանիր սպիտակ մալանչներ. Դգ. Ալ. կարդա մյ
իմ իելօր մանուկ. Ծատ.

ԲԱՆԻ ՄԱՍԻՐ

§ 20. Ամեն մի առանձին վերցուած բառ կոչւում
է բանի կամ խօսքի մաս (часть речи):

Բանի մասերն իննը տեսակ են

1. Գոյական անուն (имя существительное),
2. Ածական անուն (имя прилагательное),
3. Դերանուն (мѣстоименіе),
4. Թւական անուն (имя числительное),
5. Բայ (глаголъ),
6. Մակրայ (нарѣчіе),
7. Նախդիր (предлогъ) և յետադիր (послѣлогъ),
8. Շաղկապ (союзъ),
9. Միջարկութիւն (междометіе):

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԱՌԱՐԿԱՅ

§ 21. Ամեն մի իր կամ բան, որ ճանաչում ենք
մեր արտաքին զգայարանքներով (տեսանելիքով, լսե-
լիքով, ճաշակելիքով, հոտոտելիքով, շօշափելիքով)
կամ մեր մտքով, կոչւում է առարկայ (предметъ):—
Գիրք, աշակերտ, քաջութիւն, երկիւդ:

Այն առարկան, որ ճանաչում ենք մեր արտա-
քին զգայարանքներով, կոչւում է նիւթական (чув-
ственный):—Տուն, զանգակ, աղ, վարդ, ձիւն:

Իսկ այն առարկան, որ ճանաչում ենք մեր մըտ-
քով, կոչւում մտաւոր (умственный) —Ուրախու-
թիւն, ըսոլէ, հոգի:

Վարժութիւն:—Հետեւալ առարկաներից ո՞ւն է նիւթա-
կան և մեր մտաւոր.

Զուլը, ծառ, քամի, սառուց, ծաղիկ, աշխատանք, բա-
րութիւն, մատիտ, ոյժ, եռանդ, փայտ, սէր, սեր, հոտ,
թոչուն, կարծիր, մահ, կատու, կարիք, Աստեծ, հրեշտակ,
երկաթ, բամբակ, կաթ, այզի:

§ 22. Նիւթական առարկան լինում է շնչաւոր
(одушевленный) և անշոնչ (неодушевленный):

Շնչաւոր կոչւում է այն առարկան, որ իր կամ-

բոլ կարող է շարժւել և փոխւել մի տեղից միւսը: —
Մարդ, գաղան, թռչուն:

Իսկ անշունչ կոչւում է այն առարկան, որ իր
կամքով չի կարող շարժւել և փոխւել մի տեղից
միւսը, — Սեղան, գիրք, քար, փայտ:

Վարժութիւն: — Հետեւեալ առարկաներից ո՞րն է շնչաւոր և
ո՞րն անշունչ:

Զի, աթոռ, գրիչ, հաւ, քանոն, աման, ձուկ, զինւոր,
հովիտ, ոչխար, կօշիկ, թռողթ, գլխարկ, խոհարար, աղջիկ,
բաղ, հաց, սագ, տետրակ, վարժապետ, սպայ, պայուսակ
ճանճ, նապաստակ, գրչահատ:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՌԻՆ ԵՒ ՆՐԱ ՏԵՍՍԿՆԵՐԸ

§ 23. Ամեն մի առարկայի անուն կոչւում է
գոյական (имя существительное): — Երեխայ, ծառ,
հօտ, Արար, բարութիւն:

Գոյական անունները լինում են՝ յատուկ (соб-
стvenное), հասարակ (нарицательное) և հաւաքական
(собирательное):

Յատուկ կոչւում են այն անունները, որոնք պատ-
կանում են միայն մէկ առարկայի: — Թիֆլիս, Արա-
րատ, Կուր, Մարիամ:

Հասարակ կոչւում են այն անունները, որոնք պատ-
կանում են շատ միատեսակ առարկաների: — Թուչուն,
տետրակ, ծաղիկ:

Հաւաքական կոչւում է միասին հաւաքւած միա-
տեսակ առարկաների ընդհանուր անունը: — Հօտ, ջոկ,
երամ, գորք:

Վարժութիւն: — Որոշեցէք հետեւեալ գոյականների տե-
սակը.

Արշակ, անտառ, աշակերտ, Մոսկւա, վաշտ, սենեակ,
շաքար, ալիւր, թանաք, թանաքաման, խումբ, տուն, հազոր,
Անի, փողոց, նախիր, Ախուրեան, Ակուլիս, աթոռ, պատկեր,
Մարգարիտ, մարգարիտ, Եղիսարէթ, Աղելայիդա, Յարու-
թիւն, յարութիւն, Շուշան, շուշան, Աստղիկ, աստղիկ:

ՍԵՐ

§ 24. Գոյական անունները հայոց լեզուում չ'ու-
նեն բերականական սեռ (родъ):

Քերականական սեռ ունեն միայն այն անուն-
ները, որոնք պատկանում են կին-մարդկանց. սրանք
վերջանում են՝ ունի, անուշ և դոխտ: — Աշակերտ-ունի,
ուսուցչ-ունի, հայ-ունի, Հայկ-անուշ, Վարդ-անուշ,
Խոսրովի-դոխտ:

Շնչաւոր առարկաններին պատկանող միւս ա-
նունների սեռը իմացւում է միայն նշանակութիւնով:
օրինակ՝ հայր, եղբայր, պատ, աքաղաղ արական
(мужеский) սեռի անուններ են. իսկ մայր, բոյր,
հարս, տատ, մարի, մաքի - իգական (женский), սեռի:

ԹԻՒ

§ 25. Գոյական անուններն ունեն երկու թիւ
(число)՝ եզակի (единственное) և յոզնակի (мно-
жественное):

Երբ խօսւում է մի առարկայի մասին, գործ է
ածւում եզակի թիւ: — Հաւ, պատ, որսորդ, սեղան:

Իսկ երբ խօսւում է երկու կամ աւելի առարկա-
ների մասին, գործ է ածւում յոզնակի թիւ: — Հաւեր,
պատեր, որսորդներ, սեղաններ:

Յոդնակի թիւը կազմւում է եզակիից, ընդունելով եր կամ ներ վերջաւորութիւնը։ Միավանկ բառերը վերջանում են եր։—Հաւ-եր, ծառ-եր, պատ-եր, տն-եր։

Իսկ բազմավանկ բառերը վերջանում են ներ։—Մատիտ-ներ, աշակերտ-ներ, ամանեղին-ներ։

Մի քանի միավանկ բառեր՝ կորցնելով իրանց արմատական և վերջաւորութիւնը (օր. ձեռ, ոտ, գուռ, գառ, ձուկ, մուկ և այլն), յոդնակի թւում վերջանում են ներ (ձեռներ, ոտներ, գուներ, գառներ, ձկներ, մկներ և այլն)։

Ծանօթ.—Յատուկ անունները յոդնակի թիւ չ'ունեն։

ՀՈԼՈՎ

§ 26. Առարկաների մէջ եղած յարաբերութիւնները ցոյց տալու համար՝ գոյական անունները փոփոխում են իրանց վերջաւորութիւնները։ այդ փոփոխութիւնները կոչում են հոլով (падежъ)։

Հոլովները եօթն են՝

1. Տողական (именительный) — ավ, ինչ.
2. Հայցական (винительный) մւմ, ինչ.
3. Սեռական (родительный) — մւմ, ինչի.
4. Տրական (дательный) — մւմ, ինչի.
5. Բացառական (отложительн.) — ումնից, ինչից.
6. Գործիական (творительный) — ումնով, ինչով.
7. Ներգոյական (мѣстный) — ումնում, ինչում.

Բացի սրանցից կայ և կոչական (звательный) հոլով, որ նման է ուղղականին։

Ո՞վ հարցը վերաբերում է շնչաւոր առարկաներին, իսկ ի՞նչ՝ անշունչ առարկաներին։

Դոյական անունների փոփոխութիւնը հոլովով և թւով կոչում է հոլովում (склонение)։

ՀՈԼՈՎՆԵՐԻ ՎԵՐՋԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 27. Ուղղական հոլովը եզակի թւում չ'ունի ոչ մի վերջաւորութիւն։ Զանազանում են միայն բառերի բները։

Իսկ յոդնակի թւում բոլոր անունները վերջանում են եր կամ ներ (§ 25)։

Երբ ընդհանուր միտքը մասնաւորի է փոխում, ուղղական հոլովն ընդունում է ը (ն) յոդը (§ 33)։

Սեռականն եզակի թւում ունի երեք տեսակ կանոնաւոր վերջաւորութիւն՝ ի (հաց-ի), ու (գին-ու), ան կամ եան (ձկ-ան, բարութ-եան)։

Սեռականի յոդնակին՝ ընդունելով եր կամ ներ, վերջանում է միշա ի՛։—Հաց-եր-ի, գինի-ներ-ի, ձկ-ներ-ի, բարութիւն-ներ-ի։

Տիական նման է սեռականին։

Հայցականը սովորաբար նման է ուղղականին։ Բայց բանական առարկաների անունները (հայր, մայր, աշակերտ, զինւոր, խոհարար), երբ իրանց վերջում ունեն ս, դ, ն (ը) մասնիկը, հայցականում ընդունում են տրականի վերջաւորութիւն։—Աշակերտիս, աշակերտիդ, աշակերտին։

Հայցականում տրականի վերջաւորութիւն են ընդունում նաև այն յատուկ անունները, որոնք վերաբերում են մարդկանց։—Արամին, Մարիամին, Լևոնին։

Բացառականը եզակիում վերջանում է ից կամ ուց։—Հաց-ից, գին-ուց, ձկն-ից, բարութիւն-ից։

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ից.—Հաց-եր-ից, զինի-ներ-ից, ձկ-ներ-ից,
բարութիւն-ներ-ից։

Գործիականը եղակիում վերջանում է ով կամ
եամբ։—Հաց-ով, զին-ով, ձկն-ով, բարութիւն-ով կամ
բարութ-եամբ։

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ով։—Հաց-եր-ով, զինի-ներ-ով, ձկ-ներ-ով,
բարութիւն-ներ-ով։

Ներգոյականը եղակիում վերջանում է ում։—
Հաց-ում, զին-ում, ձկն-ում, բարութիւն-ում։

Յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, ընդունում
է նոյն ում վերջաւորութիւնը։—Հաց-եր-ում, զինի-
ներ-ում, ձկ-ներ-ում, բարութիւն-ներ-ում։

Շնչաւոր տուարկաների (մանաւանդ մարդկանց)
անունները ներգոյականում շատ անդամ ընդունում
են սեռականի վերջաւորութիւն և մէջ բառը։—Մար-
դու մէջ, աշակերտների մէջ։

§ 28. ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐԻ ԲՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եղակի		Յոգնակի
—	Ա. Հ.	Եր, ներ
ի, ու, ան (եան)	Ս. Տ.	» »+ի
ից, ուց	Բ.	» »+ից
ով	Գ.	» »+ով
ում	Ն.	» »+ում

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

§ 29. Գոյականներն ունեն երեք հողովում, որոնք
որոշում են եղակի սեռականի վերջաւորութիւննե-
րով (§ 27).

- | | |
|--|-------|
| Ա. հողովում—ի | հաց-ի |
| Բ. հողովում—ու | զինու |
| Գ. հողովում—ան, եան ձկ-ան, բարութ-եան։ | |

Կան. և Ա. ՀՈՂՈՎՈՒՄ

(ի)

§ 30 Ա. հողովման պէս հողովում են գոյական-
ների մէծ մասը։

Եղակի

- | | |
|------------|------------|
| Ա. Հ. ծով | որսորդ |
| Ս. ծով-ի | որսորդ-ի |
| Բ. ծով ից | որսորդ-ից |
| Գ. ծով-ով | որսորդ-ով |
| Ն. ծով-ում | որսորդ-ում |

Յոգնակի

- | | |
|---------------|----------------|
| Ա. Հ. ծով-եր | որսորդ-ներ |
| Ս. ծով-եր-ի | որսորդ-ներ-ի |
| Բ. ծով-եր-ից | որսորդ-ներ-ից |
| Գ. ծով-եր-ով | որսորդ-ներ-ով |
| Ն. ծով-եր-ում | որսորդ-ներ-ում |

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

(ու)

§ 31. Բ. հոլովման պատկանում են այն գոյականները, որոնք եզակի ուղղականում վերջանում են իւ:

Եզակի

Ո. Հ.	գինի	ձի
Ս. Ս.	գին-ու	ձի-ու
Բ.	գին-ուց	ձի-ուց
Գ.	գին-ով	ձի-ով
Ն.	գին-ում	ձի-ում

Յոգնակի

Ո. Հ.	գինի-ներ	ձի-եր
Ս. Ս.	գինի-ներ-ի	ձի-եր-ի
Բ.	գինի-ներ-ից	ձի-եր-ից
Գ.	գինի-ներ-ով	ձի-եր-ով
Ն.	գինի-ներ-ում	ձի-եր-ում

Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

(ան, եան)

§ 32. Գ. հոլովման պատկանում են այն գոյականները, որոնք եզակի սեռականում վերջանում են ան կամ եան: Եան վերջանում են այն գոյականները, որոնք ուղղականում ունեն իւն վերջաւորութիւնը:

Եզակի

Ո. Հ.	դուռ(ն)	բարութ-իմ
Ս. Ս.	դուռն	բարութ-եան
Բ.	դոն-ից	բարութ-իւն-ից
Գ.	դոն-ով	բարութ-իւն-ով
Ն.	դոն-ում	բարութ-իւն-ում

Յոգնակի

Ո. Հ.	դոն-եր	բարութիւն-ներ
Ս. Ս.	դոն-եր-ի	բարութիւն-ներ-ի
Բ.	դոն-եր-ից	բարութիւն-ներ-ից
Գ.	դոն-եր-ով	բարութիւն-ներ-ով
Ն.	դոն-եր-ում	բարութիւն-ներ-ում

Դուռ բառի պէս են հոլովւում ծուլ(ձկ-ան), լեառ (լեռ-ան), զարուն (գարն-ան), աշուն (աշն-ան) և այլն: Ում վերջացած անունները հոլովւում են Ա. և Դ. հոլովման պէս: — Խոստում — խոստումի կամ խոստման: Իւն վերջացած գոյականների եզակի գործիականում երբեմն զործ է ածւում գրաբարի եամբ վերջաւորութիւնը: — Բարութ-եամբ (փոխանակ՝ բարութիւն-ով), ար-եամբ (փոխանակ՝ արիւն-ով):

Յօդ

§ 33. Յօդ կոչւում է այն մասնիկը, որ՝ դըր-ւելով անւան վերջին՝ տալիս է նրան որոշ նշանակութիւն և ընդհանուր միտքը մասնաւորի է փոխում: — Զինւոր-ը, մարգարէ ն, սեղան-ը:

Հ և ն որոշող յօդեր են. սրանցից ը զրւում է բաղաձայն գրերից յետոյ, իսկ ն՝ ձայնաւորներից յետոյ:

Հ յօդը փոխւում է ն-ի, երբ յաջորդ բառը ըստ
կըսւում է ձայնաւորով:—Ձմեռն անցաւ:

Առանց որոշող յօդի՝ անուններն ունեն ընդհաւուր միտք:—

Փողոցով զինւոր անցաւ:

Սենեակում սեղան է դրւած:

Եյս օրինակներում յայտնի չէ՝ թէ խօսքը ուր զինւորի կամ սեղանի մասին է: Զինւոր կամ սեղան ասելով՝ հասկանում ենք մի որևիցէ զինւոր կամ սեղան: Աւրիշ է, եթէ ասենք՝

Փողոցով անցաւ զինւորը:

Սենեակում դրւած է սեղանը:

Ասելով զինւորը կամ սեղանը, իսկոյն հասկանում ենք, որ խօսքը մի որոշ ու մեզ յայտնի զինւորի կամ սեղանի մասին է:

Կայ և անորոշ յօդ մի, որ դրւում է անունների սկզբում, երբ խօսքը մի մասնաւոր և անծանօթ առարկայի մասին է:—Մեզնից շատ առաջ մար մի թագաւոր:

§ 34. Յօդ ունեցող դոյականները հոլովում են այսպէս.

Եզակի

Ո. զինւորը	սեղանու
Ս. զինւորի-	սեղանի-
Տ. զինւորին	սեղանին
Հ. զինւորին	սեղանու
Բ. զինւորից(ը)	սեղանից(ը)
Գ. զինւորով(ը)	սեղանիով(ը)
Ն. զինւորում(ը)	սեղանիում(ը)

Յոգնակի

Ո. զինւորները	սեղանները
Ս. զինւորների	սեղանների
Տ. զինւորներին	սեղաններին
Հ. զինւորներին	սեղաններին
Բ. զինւորներից(ը)	սեղաններից(ը)
Գ. զինւորներով(ը)	սեղաններով(ը)
Ն. զինւորներում(ը)	սեղաններում(ը)

Ինչպէս տեսնում ենք, և յօդը սեղականում բացէ թողնուում: Բացառականում, գործիականում և ներգոյականում և յօդը շատ անգամ բաց է թողնուում:

Կան դիմորոշ յօդեր ս, դ, որոնք գործ ածւելով անունների հետ միասին, անխտիր մնում են բոլոր հոլովների վերջին:—Մատիտ-ս, մատիտ-դ, մատիտից-ս, մատիտից-դ. մատիտով-ս, մատիտով-դ և այլն:

Բանական առարկաների անունները ս, դ, ը (ն) յօդերով և մարդկանց վերաբերող յատուկ անունները հայցականում ընդունում են տրականի վերջաւորութիւն (§ 27):

Անկանոն ՀՈԼՈՎՈՒՄ

§ 35. Անկանոն կամ զարտուղի կոչւում է այն հոլովումը, որ դուրս է ընդհանուր կանոնից:

Անկանոն կերպով են փոփոխւում, օրինակ՝

կին, քոյր, հայր, մայր. եղբայր, տէր, շուն, տուն և այլն:

Անկանոն հոլովւող գրյականները եզակի սեռականում գլխաւորապէս ունեն (ոչ և օ), որոնք պահպանում են եզ. միւս հոլովներում:

Եզակի

Յոգնակի

Ո. Հ. կին	հայր	կանայք	հայրեր
Ս. Տ. կնոջ	հօր	կանանց	հայրերի
Բ. կնոջից	հօրից	կանանցից	հայրերից
Գ. կնոջով	հօրով	կանանցով	հայրերով
Ն. {կնոջում հօրում	{կանանցում	{հայրերում	
Ն. {կնոջմէջ հօր մէջ	{կանանցմէջ	{հայրերից	

Կին բառի պէս եզակի թւում հոլովւում են՝ քոյր, տէր, ընկեր, աներ, տալ և այլն:

Հայր բառի պէս են հոլովւում մայր, եղբայր, սանհայր, սանամայր, հօրեղբայր և այլն:

Ժամանակ ցոյց տւող անունները, օրինակ՝ օր, ցերեկ, զիշեր, ժամ, տարի, ամառ և այլն, բացի կանոնաւոր հոլովւմից՝ ունեն նաև եզակի սեռականում ույ (ուայ) և բացառականում անից (ուանից): — Օրայ, օր-սանից, տար-այ տար-անից:

Անկանոն են հոլովւում սէր և Աստած բառերը, որոնք դառնում են՝ սիրոյ, Աստուծոյ, սիրուց, Աստուծոց և այլն: Այս ձեերից սիրոյ, Աստուծոյ գրաբարից են առնւած:

Մարդ եզակիում լինում է՝ մարդու, մարդուն, մարդով. խկազնակիում՝ մարդիկ, մարդկանց, մարդկանցից և այլն:

ՓՈԽԻՈՂ ԵՒ ԿՈՐՉՈՂ ԳՐԵՐ

§ 36. Բառերի աճման ժամանակ, վերջին վաճակի ի, ու, է ձայնաւորները և եա, եայ, ոյ զրկւելով շեշտից՝ նւագում են ու սովորաբար փոխում այսպէս:

ա) ի և ու զառնում են օ, որը սովորաբար չի զգրւում (§§ 4, 11, թ), այլ պահպանում է միայն տողադարձի ժամանակ: — Գիրք-գլորի՛=զըքի. երաշնք-երկւնքի՛=երկնքի: Զո՞ր—ջը-րի՛=ջրի. խոր-լորդ-խորհօրդի՛=խորհրդի:

բ) է զառնում է ի: — Տէր, տիրոջ, տիրել: — գ) եա երկբարբառը բարդ բառերում կորցնում է իր երկրորդ բաղադրիչ մասը: — Սենեակ—սենեկապետ, մատեան—մատենապիր:

Ընկ պարզ բառերում եա մնում է անփոփոխ: — Սենեակ, սենեակի, սենեակներ, մատեանի, մատեաններում և այլն:

դ) եայ զառնում է է: — Քրիստոնեայ—քրիստոնէութիւն:

ե) ոյ զառնում է ու: Զգոյշ—զգուշանալ. համբոյյր—համբուրել:

Կան բառեր, որոնց մէջ ի, ու չեն կորչում: — Կարծիք—կարծիքի, հայրենիք—հայրենիքի, մայրիկ—մայրիկի, անուն—անունի, հեղուկ—հեղուկի, անուս—անուսի:

Վարծուրին: — Հոլովեցէք հետեւալ անունները. Հաւ, հաւը, տունս, երդում, հորվում, ընկերդ, հայելի, մատանիս, բանալին, ոտ, ձեռ, անուն, աշուն, արին, ձիւն:

եղ, ձուկ, Յարութիւն, յարութիւն, խորհուրդ, ժողովուրդ, երկինք, տիկին, կնիկ, աղջիկ, սանահայր, սեր, սէր, քաջութիւն, զօջութիւն, առաւօտ, գիշեր, ցերեկ, ժամ, ժայխօ, վիր, ձեռագիր, բուն, հաւաբուն:

§ 37. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ա) Յատուկ գոյական անունները միշտ սկսում են մեծատառով: — Թիֆլիս, Արաքս, Լևոն, Մարգարիտ:

բ) Այն յատուկ անունները, որոնք ուղղականում վերջանում են ա, միւս հոլովումներում ա-ից յետոյ ընդունում են յ: — Աննա—Աննայի. Մոսկա—Մոսկայում:

գ) Յ վերջացած անունները (փեսայ, երեխայ, քահանայ), երբ ընդունում են յօդ կամ յոզնակի թւի վերջաւորութիւն, կորցնում են յ գիրը: — Փեսան, երեխաս, քահանաներ:

Բացառութիւն են կազմում միավանկ բառերը: — Հայ—հայր, հայեր. թէյ—թէյս, թէյդ և այլն:

դ) Ժամանակ ցոյց տւող անունների սեռականի անկանոն այ վերջաւորութիւնը գրւում է յ-ով: — Տարւայ, մայիսայ, օրւայ, ամառայ:

ե) Մի քանի անուններ յոզնակի ուղղականում եր կամ ներ վերջաւորութեան տեղ՝ կարող են ընդունել գրաբարի վերջաւորութիւնը՝ ը, որ սեռ, հոլովում դառնում է յ: — Որդիք — որդոց, հայք—հայոց, յոյնք—յունաց:

զ) Մարդիկ վերջանում է կ-ով:

ԱՌԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 38. Առարկաների ոռպիսութիւնը կամ յատկութիւնը ցոյց տւող բառը կոչւած է ածականանուն (նոյն ուղարկութեան անունու առաջականացնելու համար):

Ածականները սովորաբար դրւում են գոյականաներից առաջ և պատասխանում են ինչպիսի՞ և ո՞ր հարցերին: — Բարի մարդ, մեծ քաղաք, ոսկէ մատանի, զարնահային անձրեւ:

Ածականները լինում են երկու տեսակ՝

- 1) Որակական (качественное): — Բարի, մեծ:
- 2) Յարաբերական (относительное): — Ոսկէ, զարնահային:

Որակական ածականները ցոյց են տալիս առարկայի բնական որպիսութիւնը, իսկ յարաբերականները՝ մի առարկայի յարաբերութիւնը միւսի հետ:

Վարժուրին: — 1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ որոշեցէք որակական և յարաբերական ածականները.

Հին Արաքսը զարմանալի քմահաճութիւններ ունէր: Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կուռմ էր իր անհաւասար եղերքի հետ և, կարծես, զժգոն էր նեղ շալզից: Երբեմն երկու լեռնային գատիներ միաբանում էին և սեղմում նրան իր սնց անձուկ և խորին ձորակի մէջ: Բաֆթի:

2. Գրեցէք մի քանի ածականներ, որոնք ցոյց տան յարաբերութիւն՝ նիւթի, տեղի, ժամանակի և քաշի հետ:

ՀԱՄԵՍՍՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

§ 39. Որական ածականներն ունեն երեք համեմատութեան աստիճաններ (степени сравненія):
1. Դրական (положительная), **2.** բաղդատական (сравнительная) **և 3.** գերազական (превосходная):

1. Որական աստիճանը ածականի սկզբնական ձևն է: — Արամը խելօք աշակերտ է:

2. Բարյասական աստիճանը կազմւում է աւելի բարի կամ բացառական հոլովի օգնութեամբ:

Արամն ամելի խելօք աշակերտ է, քան թիջայկը:

Արամը չայկից խելօք աշակերտ է:

Ամելի բարը պահանջում է քան թէ:

Ամելի բարը գործ է ածւում և բացառական հոլովի հետ միասին: — Արամը չայկից աւելի խելօք է:

3. Գերազական աստիճանը կազմւում է ամենամասնիկի կամ շատ, սաստիկ, անչափ, բոլորից, ամենից բառերի օգնութեամբ: —

Արամն ամենախելօք աշակերտ է:

Արամը շատ խելօք աշակերտ է:

Արամը բոլորից խելօք աշակերտ է:

Վարձարին: — Գրեցէք մի քանի նախաղասոթիւններ, որոնց մէջ լինեն հետեւալ ածականների բաղդատական և գերազական աստիճանները:

Բարձր, հաստ, տաք, ծեր, փոքր, հարուստ, աղքատ, ծանր, բարի, գեղեցիկ, հաւատաբիմ, ընկերասէր:

ՈԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 40. Ածականները՝ գոյականի հետ վարւելիուչեն փոփոխւում: —

Եզակի

- | | | | |
|----|----------------|-------------------|----------------|
| Ո. | Հ. | Ղաւ աշակերտ | Ղաւ աշակերտներ |
| Ս. | Ղաւ աշակերտի | Ղաւ աշակերտների | |
| Բ. | Ղաւ աշակերտից | Ղաւ աշակերտներից | |
| Գ. | Ղաւ աշակերտով | Ղաւ աշակերտներով | |
| Ն. | Ղաւ աշակերտում | Ղաւ աշակերտներում | |

Միայնակ գործ ածականներն ընդունում են գոյականի միտք և հոլովում են գոյականների
Ա. հոլովման պէս: —

Եզակի

- | | | |
|----|---------|------------|
| Ո. | Ղաւ | Ղաւ-եր |
| Ս. | Ղաւ-ի | Ղաւ-եր-ի |
| Բ. | Ղաւ-ից | Ղաւ-եր-ից |
| Գ. | Ղաւ-ով | Ղաւ-եր-ով |
| Ն. | Ղաւ-ում | Ղաւ-եր-ում |

§ 41. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Այն յարաբերական ածականները, որոնք ցոյց են տալիս առարկայի նիւթը, վերջանում են ի, է, (եայ), եղէն: — Արծաթ-ի, երկաթ-է, քար-եղէն:

2) Այն ածականները, որոնք ցոյականների հետ միասին կազմում են մի յատուկ անուն, գրւում են մեծատառով: — Կարմիր ծով, Մեռեալ ծով, Նոր աշխարհ, Արա Գեղեցիկ:

Ցողնակի

Յ) Ածականների գերադրական աստիճանում
ամենա մասնիկը գրւում է բառի հետ միասին:—
Ամենաքարի, ամենալաւ, ամենամեծ:

Իսկ եթէ ամենա մասնիկի փոխարէն՝ լինում են
ամենից, սոլորից, շատ և այլն, այն ժամանակ որ սնք,
իբրև առանձին բառեր, գրւում են ջոկ:—Ամենից բա-
ռի, սոլորից լաւ:

ԴԵՐԱՆՈՒՆ

§ 42. Այն բառերը, որոնք կատարում են գոյա-
կան և ածական անունների գեր, կոչւում են դերա-
նուն (մեստօնութեան):—Ես, զուք, այս, սա, որ:
Դերանունները լինում են վեց տեսակ՝

1) Անձնական (личныхъ)՝ ես (առաջին դէմք), զու (երկրորդ դէմք), նա (երրորդ դէմք):

2) Ցուցական (указательныхъ)՝ սա, զա, նա, այս,
այդ, այն և այլն:

3) Հարցական (вопросительныхъ)՝ ո՞վ, ի՞նչ, ո՞ր
և այլն:

4) Ցարաքերական (относительныхъ)՝ ով, ով կամ
ով որ, ինչ կամ ինչ որ:

5) Որոշեալ (определительныхъ)՝ իրաքանչիւր,
սոլոր, ամեն մէկ, ինքը և այլն:

6) Անորոշ (неопределенные)՝ ոչոք, ոչինչ, ոմն,
մի քանի և այլն:

Հայոց լեզուում չը կան առանձին ստացական
(притяжательныхъ) դերանուններ. սրանց տեղ գործ են
ածւում ես, զու, ինքն դերանունների սեռականը՝ իմ,
քո, իր:

§ 43. Դերանուններն ունեն առանձին մասնիկ-
ներ՝ ս, դ, ն (ը), որոնք կոչւում են դերանունական
յօդեր:

Սրանցից ս ծառայում է առաջին դէմքին, դ՝ երկ-
րորդ, ն (ը)՝ երրորդ:

Դերանւանական յօդերը գործ են ածւում երեք
տեսակ դերանունների մեջ.

1) Անձնական:—Վարժապետ-ս, աշակերտ-դ (այ-
սինքն՝ ես՝ վարժապետս, դու՝ աշակերտդ):

2) Ստացական: Վարժապետ-ս, աշակերտ-դ (այ-
սինքն՝ իմ՝ վարժապետը, քո աշակերտը):

3) Ցուցական:—Վարժապետ-ս, աշակերտ-դ (այ-
սինքն՝ այս վարժապետը, այդ աշակերտը):

Վարժութիւն:—Հետևեալ ոտանաւորից ջռկեցէք դե-
րանունները և որոշեցէք նրանց տեսակը.

Այն մվ է կանզնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկնք ամբարձած,
Բազմութեան ուշը դէպի նա դարձած,
Որին ամենը հայր են անւանում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա...
Երբ մենք թաթախւած Ադամայ մեղօք,
Եկանք այս աշխարհ՝ լցւած ցաւերով,
Ո՞վ մեղ ափոփեց իւր սուրբ խօսքերով: Ո.Պատ.

ԴԵՐԱՆՈՒԽՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 44. Անձնական դերանուններ.

Ե զ ա կ ի

Ո.	ես	դու	նա
Ո.	իմ	քո	նրա (նորա)
Տ.	ինձ	քեզ	նրան (նորան)
Բ.	ինձանից	քեզանից	նրանից (նորանից)
Գ.	ինձանով	քեզանով	նրանով (նորանով)
Ն.	ինձանում	քեզանում	նրանում (նորանում)

Յոգնակի

Ո.	մենք	դուք	նրանք (նորանք)
Ո.	մեր	ձեր	նրանց (նորանց)
Տ.	մեզ	ձեզ	նրանց (նորանց)
Բ.	մեզանից	ձեզանից	նրանցից (նորանցից)
Գ.	մեզանով	ձեզանով	նրանցով (նորանցով)
Ն.	մեզանում	ձեզանում	նրանցում (նորանցում)

Նրանք դերանունի տեղ երբեմն գործ է ածւում
գրաբար ձեզ՝ նորա, նոցա, նոցանից և այլն:

§ 45. Իմ, քո, իւր դերանունները, երբ գոյա-
կանի հետ միասին են լինում, չեն փոփոխում, :—Իմ՝
մատիտը, իմ՝ մատիտի, իմ՝ մատիտից, իմ՝
մատիտով, իմ՝ մատիտները և այլն:

Իսկ երբ միայնակ են, ընդունում են ը որոշող
յօդը և հոլովում են գոյականների Ա. հոլովման պէս:
Եզակի Յոգնակի

Ո.	իմը	իմերը	(իմոնք)
Ո.	իմի	իմերի	(իմոնց)
Տ.	իմին	իմերին	(իմոնց)
Հ.	իմը կամ իմին իմերը կամ իմերին	(իմոնց)	
Բ.	իմից (ը)	իմերից (ը)	(իմոնցից)
Գ.	իմով (ը)	իմերով (ը)	(իմոնցով)
Ն.	իմում (ը)	իմերում (ը)	(իմոնցում)

Այսպէս են հոլովում և ընկը, նրանը, ձերը, մե-
քը, իրանցը:

Իւր կամ իր դերանունը՝ ընդունելով որոշող
յօդ, դառնում է իրանը:

§ 46. Յուցական դերանունները սա, դա, նա
գործ են ածւում մենակ և հոլովում են նա անձ-
նականի ձեռվ (§ 44):

Այս, այդ, այն սովորաբար գործ են ածւում
գոյականների հետ միասին և չ'ունեն հոլովական վեր-
ջաւորութիւններ:

§ 47. Հարցական դերանունները ո՞վ, ի՞նչ հոլով-
ում են այսպէս:

Եզակի	Յոգնակի
Ո. ով	ինչ
Ս. ում	ինչի
Տ. ում	ինչի
Հ. ում	ինչ
Բ. ումից	ինչից
Գ. ումնով	ինչով
Ն. ումնում	ինչում

Ով միշտ գործ է ածւում մենակ:

Ո՞ր դերանունը գոյականի հետ միասին չի փո-
փոխում. իսկ երբ մենակ է, ընդունում է ը յօ-
դը և հոլովում է այսպէս.

Եզակի	Յոգնակի
Ո. որը	որոնք
Ս. որի	որոնց
Տ. որին	որոնց
Հ. որը կամ որին	որոնց
Բ. որից (ը)	որոնցից
Գ. որով (ը)	որոնցով
Ն. որոնւմ (ը)	որոնցում

Որ, երբ մենակ է, գործ է ածւում և առանց ը-
յօդի:

§ 48. Յարաքերական դերանուններից որ հոլով-
ում է ո՞ր հարցականի պէս, միայն առանց հարցական
նշանի.—Որը, որի, որին և այլն:

Իսկ ով որ, ինչ որ դերանուններից որ մնում է
անփոփոխ. հոլովում է միայն ով, ինչ:—Ով որ,
ինչ որ, ում որ, ինչի որ, ումնից որ, ինչից որ և այլն:

§ 49. Որոշեալ դերանուններից իւրաքանչիւր,
ամեն մէկ, ամեն, բոլոր, երբ գոյականի հետ են, չեն
հոլովում. իսկ երբ մենակ են, հոլովում են գոյա-
կանների Ա. հոլովման ձեռփ:—Իւրաքանչիւր, իւրա-
քանչիւրի, իւրաքանչիւրից և այլն:

Իւրաքանչիւր և ամեն մէկ յոգնակի թիւ չ'ունեն:
Ամեն, բոլոր, թէպէտ յոգնականի միտք ունեն,
բայց հոլովում են եզակի:

Եզակի	Յոգնակի
Ո. ինը	իրանք
Ս. իւր (եր, իրա)	իրանց
Տ. իրան	իրանց
Հ. իրանից	իրանցից
Բ. իրանով	իրանցով
Գ. իրանում	իրանցում

§ 50. Անորոշ դերանուններից ոչ ոք, ոչինչ
գործ են ածւում մենակ և հոլովում են միայն ե-
ղակի թւում:—Ոչ ոք, ոչ ոքի, ոչ ոքից և այլն:

Ոմն եզակի թւում չի հոլովում, իսկ յոգնա-
կանում դառնում է ոմանք, ոմանց, ոմանցից և այլն:

Մի քանի բոլոր միւսի հոլովերում ընդունում է ու
մասնիկը: — Մի քանի, մի քանիսի, մի քանիսից և այլն:

§ 51. ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Ես, ղու, մնաք, ղուք գերանուների բացա-
ռական, գործիական և ներգոյական հոլովերից յա-
ճախ դուրս է գցւում ա տառը: — Փոխանակ՝ ինձանով.
քեզանով, մեզանից, ձեզանից և այլն, կարելի է գործ
ածել՝ ինձանով, քեզնով, մեզնից, ձեզնից և այլն:

2) Սա, ղա, նա, սրա, ղրա, նրա, սորա, ղորա,
նորա գրւում են առանց յ տառի (§ 12, գ, 2):

3) Հարցական գերանուներից ո՞վ գրւում է
ո՞ով (§ 10, ա):

Վարժութիւն: — Հետևեալ նախադասութիւններից ջոկե-
ցէք գերանունները և օրոշեցէք նրանց տեսակն ու հոլովը:

Ով որ փանայ, շուտով չքանայ: Ով չուստ, նա կուշտ:
ին առանց քեզ էլ կարող եմ ստանալ, ինձնից վրկութիւն
դու բնաւ մի յուսալ: Դժի համար ամեն օր կիրակի է:
Ամեն ծառ իր բարն ունի: Ես տեսայ ձերոնց կան ևս ձայն,
չգիտես՝ ուր է այն: Դիրքս գնաց տարածւեցաւ մեր երկ-
րում, ոմանց սիրաց վիրաւորեց, ոմանց տւաւ նա ըերկրում:
Մեզանից իւրաքանչիւրը պարտաւոր է սովորել իր մայրենի
լեզուն: Ես իմն ասացի, հիմա ղուք զիտէք: Ո՞ւ մարդն է
կոչւում բարի: Բարի կոչւում է այն մարդը, որ լաւութիւն
է անում ամենքն: Ենչ որ կայ քո զըքում, այն էլ կայ և
իմում: Ոչ ոք չի ուզիւ, որ իր աչքը կոյր լինի: Ուրիշն հոգ
փորողը ինքը մէջը կ'ընկի:

ԹԻԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 52, Թւական անունները ցոյց են տալիս ա-
ռարկանների բանակութիւնը կամ կարգը (դասը):

Բանակութիւն ցոյց տւող թւականները կոչւում
են քանակական (количественныя) և պատասխանում
են քանի, ո՞րքան կամ ի՞նչքան հարցերին. իսկ կարդ
ցոյց տւողները կոչւում են դասական (порядковыя)
և պատասխանում են ո՞ր կամ ո՞րերորդ հարցերին:

Քանակական

1. Մէկ, մի
2. երկու
3. երեք
4. Չորս
5. Հինգ
6. Վեց
7. Եօթը
8. Ութ, ութը
9. Իննը
10. Տասը
11. Տասնումէկ

Դասական

- | | |
|-------------------|-----------|
| Առաջին (մէկերորդ) | Երկորդ |
| Երկորդ | Երրորդ |
| Երրորդ | Հինգերորդ |
| Հինգերորդ | Վեցերորդ |
| Վեցերորդ | Եօթներորդ |
| Եօթներորդ | Ութերորդ |
| Ութերորդ | Իններորդ |
| Իններորդ | Տասներորդ |

12.	Տասներկու	Տասներկուերորդ
20.	Քսան	Քսաներորդ
21.	Քսանումէկ	Քսանումէկերորդ
30.	Երեսուն	Երեսուներորդ
40.	Քառասուն	Քառասուներորդ
50.	Ցիսուն	Ցիսուներորդ
60.	Վաթսուն	Վաթսուներորդ
70.	Եօթանասուն	Եօթանասուներորդ
80.	Ութսուն	Ութսուներորդ
90.	Ինըսուն	Ինըսուներորդ
100.	Հարիւր	Հարիւրերորդ
101.	Հարիւր մէկ	Հարիւրմէկերորդ
200.	Երկու հարիւր	Երկուհարիւրերորդ
1000.	Հազար	Հազարերորդ
1000000.	Միլիոն	Միլիոներորդ:

Ի՞նչպէս տեսնում ենք, քանակական թւականները, ընդունելով լորդ (երկ-րորդ, եր-րորդ, չոր-րորդ) կամ երորդ (հինգ-երորդ, վեց-երորդ) վերջառութիւնները, դառնում են զասական:

Բացառութիւն է կազմում առաջին բառը:

Քանակական թւականներին պատկանում են նաև մասնական թւականները՝ կէս, քառորդ, մէկ հինգերորդական, երեք տասներորդական կամ մէկ հինգերորդ, երեք տասներորդ և այլն:

Թւերի միաւորների կարգը ցոյց տւող թւականները վերջանում են աւոր—Մի-աւոր, տասն-աւոր, հարիւր-աւոր, հազար-աւոր:

§ 53. Թւական անունները, երբ գոյականի հետ միասին են, չեն հոլովում: — Հինգ աշակերտ, հինգ աշակերտի, հինգ աշակերտից և այլն:

Թւական անունները, երբ առանց գոյականի են, հոլովում են գոյականների Ա. հոլովման ձևով: — Հինգ, հինգի, հնգից և այլն: Հինգերորդ, հինգերորդի, հինգերորդից և այլն:

Ամսաթիւ, տարեթիւ և ժամ ցոյց տւող թւականները լինում են քանակական: — Զրօրհնէքը լինում է յունւարի վեցին: Ստեփաննոս Նազարեանը մեռաւ հազար ութ հարիւր եօթանասուն եւ իննը թւին: Դասերը վերջանում են ժամի երկուսին:

Այն թւականները, որոնք ցոյց են տալիս՝ թէ որ կեցէ դէպք որ դարումն է կատարւում, լինում են դասական: — Հինգերորդ դարում Ա. Մեսրոպ գտաւ հայոց տառերը:

§ 54. ԹԻԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

- 1) Թւական անուններից մէկ գրւում է է-ով:
- 2) Երկու հոլովելիս՝ ընդունում է և տառը—Երկու-ս-ի, Երկու-ս-ից, Երկու-ս-ով, Երկու-ս-ում:
- 3) Եօթը և ութը հոլովելիս՝ կորցնում են և տառը՝ Եօթի, ութի, Եօթից, ութից և այլն:
- 4) Տասը հոլովելիս՝ ը տառը փոխւում է ն-ի՝ տաս-ն-ի, տաս-ն-ից և այլն. իսկ իննը կորցնում է Ը տառը՝ իննի, իննից և այլն:
- 5) Երրորդ և չորրորդ թւականներում գրւում են Երկու ը, իսկ միւս դասական թւականներում՝ մէկ ը: —

Հինգերորդ, վեցերորդ, տասներորդ, հարիւրերորդ
և այլն:

6) Առաջին գրւում է չոփ, թէպէտ լսում է չ:

Վարժութիւն:—Թւանշանով գրած թւականները գրեցէք
տառերով.

$5+5=10$, $10-8=2$, $50 \times 5=250$, $180: 9=20$, $\frac{1}{2},$
 $\frac{3}{4}, \frac{1}{7}, \frac{1}{8}, \frac{1}{10}, \frac{7}{100}$:

Պերճ Պողեանը ծնւել է 1837 թւին: Հայը Դեռնդ Ալի-
շանը մեռաւ 1901 թ. նոյեմբերի 21-ին: Սմբատ Շահազիզը
դեռ 10 տարեկան էր, երբ իր հայրենի Աշտարակ գիւղից
գնաց Մոսկվա:

ԲԱՅ

§ 55. Առարկաների գործողութիւնը կամ զրու-
թիւնը ցոյց տւող բառը կոչւում է բայ (глаголъ):—
Ուսուցիչը պատմում է (գործողութիւն): Աշակերտը
նստած է (դրութիւն):

Ս Ե Ռ

§ 56. Բայերն ունեն երեք սեռ (залогъ):՝ ներ-
գործական (дѣйствительный), կրաւորական (стра-
дательный) և չեզոք (средний).

Ներգործական բայը ցոյց է տալիս այնպիսի
գործողութիւն, որ գլխաւոր առարկայից անցնում է
երկրորդականին:—Կայէնը (զլս. առ) սպանեց Աբէ-
լին (երկր. առ.):

Կրաւորական բայը ցոյց է տալիս այնպիսի
գործողութիւն, որ մի առարկայ կրում է ուրիշ ա-
ռարկայից:—Աբէլը սպանեց Կայէնի ձեռքով:

Կրաւորական սեռը միշտ ծագում է ներգործա-
կանից, ընդունելով և (ու) մասնիկը:

Չեզոք բայը ցոյց է տալիս առարկայի զրու-
թիւնը կամ այնպիսի գործողութիւն, որ մնում է

Վործող առարկայի մէջ:—Երեխան ընած է: Աշակեր-
տը գնում է:

Վարժութիւն:—1. Հետեւալ նախադասութիւններից ջո-
կեցէք բայերը և որոշեցէք նրանց սեռը.

Դեկտեմբերին ձիւն է գալիս ու ծածկում սարու ձոր:
Յունաւարին դաշտը ծածկում է սպիտակ սաւանով: Ահա հ-
կաւ նոր տարի, հետև բերաւ նոր բարի: Հովիւն անուշ
ֆնի մէջ խնդում է ու ծիծաղում: Ազէսը պառկեց աղբի
տակին, աչքը զցեց չաղ հաւի ձագին: Խելօք մանուկներ,
շուտ հագնեցէք, շուտով դասատուն գուք հաւաքւեցէք:

2. Հետեւալ նախադասութիւնները փոփոխեցէք այս-
պէս, որ ներգործական բայերը դասնան կրաւորական.

Ծնողները սիրում են իրանց որդիներին: Մրջիւնը
բերնով իր կերն է տանում: Մելուն ծաղկներից հրաթեր
է ծծում: Հնձողներն իրանց մանգաղն են շարժում: Զկնոր-
ուը ծովը ձգեց մեծ ուսկան, հանեց մարմինը սիրուն աղ-
ջլկան: Աշակերտը կը հասկանայ իր դասը: Նա կարդում էր
հայերէն զիրք:

3. Հետեւալ նախադասութիւնները փոփոխեցէք այս-
պէս, որ կրաւորական բայերը դասնան ներգործական.

Փայտը կտրում է կացնով: Մանուկները դասատուն
հաւաքւեցին: Արիւնը արնով չէ լացւում: Ծառն իր պըտ-
դից կը ճանաչէր: Կուժը ջրի ճանպին կը կոտրէր: Խուարը
դիարատում է լոյսից: Բէլը սպանեց Հայկի նետից: Մայրը
մինիթարուում է իր դաւակով:

Ե Ղ Ա Ն Ա Կ

§ 57. Բայերն ունեն կնդ եղանակ (наклонение),
անորոշ (неопределённое), սահմանական (изъя-
вительное), հրամայական (повелительное), պայ-

մանական (условное) և ստորադասական (сосла-
гательное):

Անորոշ եղանակը բայի սկզբնական ձեն է և
վերջանում է՝ եւ (երգ-ել, աս-ել), ալ (ժպտ-ալ,
կարդ-ալ), անա (հասկ-անալ, իմ-անալ):

Կան բայեր (գլխաւորապէս չեզոք), որոնք անո-
րոշ եղանակում վերջանում են իլ (նստ-իլ, ապր-իլ,
յոդն-իլ). բայց մեր այժմեան աշխարհաբար լեզ-
ուում այդ վերջաւորութեան տեղ գործ է ած-
ուում ել:

Սահմանական եղանակը որոշ պատմում է՝
թէ սկ և երբ է կատարում գործողութիւնը:—Սո-
խակը երգում է: Աշակերտը կարդաց: Ես կը գրեմ:

Հրամայական եղանակն արտայտում է հրա-
ման, ինդիք կամ խորհուրդ:—Կարդա՛, այ իմ խելօք
մաննեկ: Ծառ. Գնա՛, որդեակ, աշխարհա անցի՛ր, պան-
ծալի անուն մեծի գու ստացի՛ր: Ո. Պատ.

Պայմանական եղանակը ցոյց է տալիս այն-
պիսի գործողութիւն, որ կարող էր կատարել, բայց
մի որևիցէ պատճառով չի կատարել:—Կը կարդայի,
եթէ ժամանակ ունենայի: Ես դաշտ կ'երթայի, դաշտ
Աւարայրի:

Ստորադասական եղանակն արտայայտում է
կասկած կամ ցանկութիւն գործողութեան կատար-
ւելու մասին:—Եթէ գնամ: Որ տեսնէի:

Վարժութիւն:—Հետեւալ նախադասութիւններից ջոկեցէք
բայերը և որոշեցէք նրանց եղանակները.
Լսէ, իմ ծննդ, լսէ, սիրական. հարազատ բոյրս խլից

իմ փեսան։ Ու Պատ. Անձրկ՛, անձրկ՛, ցած արի, բացնւը ցորեն ու գարի։ Դ. Աղ. Թէ ևս լինէի հարուստ մեծատուն, շատերի նման ևս չէի լինիլ երբէք ազգասէր ունայն խօսքերով։ Ու Պատ. Իսկ երբորդ անդամ երր ցանցը ձգեց, և կարէ ասել՝ թէ բնչ դուրս հանեց։ Ծերն սկսեց կանչել ձկնիկին։ Պուշկ.

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

§ 58. Ժամանակը (время) երեք է՝ 1. ներկայ (настоящее), 2. անցեալ (прошедшее) և 3. ապահնի (будущее):

1. Ներկայ ժամանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ կատարումէ այժմ։ — Գրում եմ։
2. Անցեալ ժամանակը ցոյց է տալիս անցած գործողութիւն։ Անցեալը լինում է՝ սահմանական, պայմանական և ստորագասական։

Սահմանական անցեալը չորս է՝

- ա) Անկատար (несовершенное)։ — Գրում էի։
- բ) Կատարեալ (совершенное)։ — Գրեցի։
- գ) Վաղակատար (предварительное прошедшее)։ — Գրել եմ, գրած եմ։
- դ) Գերակատար (давнопрошедшее)։ — Գրել էի, գրած էի։

Պայմանական անցեալ (условное прошедшее)։ — Կը գրէի։

Ստորագասական անցեալ (сослагательное прошедшее)։ Եթէ գրէի, որ գրէի։

3. Ապահնի ժամանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ պիտի կատարւի յետոյ։
Ապահնին լինում է՝
ա) Սահմանական։ — Կը գրեմ, պիտի գրեմ։
բ) Ստորագասական։ — Եթէ գրեմ, որ գրեմ։

Վարժութիւն. — Հետեւեալ նախագասութիւններից ջոկեցը բայցելը և որոշեցէք նրանց ժամանակները։

Ծիտը ծառին ծլւլում է, բազէն գլխին պտտւում է։ Զիւնէր գալիս փաթիլ-փաթիլ, հետն էլ անձրե կաթիլ-կաթիլ։ այդ միջոցին մի պառաւ կին հորթ էր փնտրում զաշտի միջին։ Արեգակը գուրս է եկել, շողքը հերթից ներս է ընկել, կը գայ մայրգ, հետը շատ կը բերի քեզ անուշ կաթ։ Մանիր թելեր հաստու բարակ, որ ևս հոգամիմ ցաւեր։ Դ. Աղ. Մարդարիտը գնում է ուսումնարան։ Լենը գնաց տուն։ Ես տեսել եմ իմ ընկերոջ։ Նա տեսել էր իր վարժապետին։ Ուզում էի եղբօրս մի նամակ գրել, բայց ժամանակ չ'ունէի։ Թէ տեսնես նորան, ինձնից բարեիր։ Ե'երթայինք, թէ կարողանայինք։

Դ Է Մ Բ

§ 59. Բայերն ունեն երեք դէմք (լուց)՝ առաջին (ես գրում եմ), երկրորդ (դու գրում ես) և երրորդ (նա գրում է)։

Թ Ի Ւ Ի

§ 60. Բայերն ունեն երկու թիւ՝ եզակի (գրում եմ, գրում ես, գրում է) և յոզնակի (գրում ենք, գրում են)։

Դ Ե Ր Բ Ա Յ

§ 61. Բայերից կազմւում են չորս տեսակ դերայ (причастие): 1. անորոշ, 2. ներկայ, 3. անցեալ և 4) ապանի:

1. Անորոշ գերբայը բայի սկզբնական ձևն է և ունի անորոշ եղանակի վերջաւորութիւնները՝ ել, ար, անալ:

Անորոշ գերբայը հայոց լեզուում հոլովւում է գոյականների Բ. հոլովման պէս: — Գրել, գրելու, գրելուց, գրելով, գրելում:

Անորոշ գերբայը, ընդունելով իս վերջաւորութիւնը, ցոյց է տալիս ժամանակ: — Գրելիս (այսինքն՝ գրելու, ժամանակ):

2. Ներկայ գերբայը վերջանում է ող: — Գր. ող:

Այս ձևը, իբրև բայից կազմւած ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխւում: — Գրող աշակերտ, գրող աշակերտի, գրող աշակերտից, գրող աշակերտներ և այլն:

Իսկ երբ գործ է ածւում առանձին, հոլովւում է գոյականների Ա. հոլովման պէս: — Գրող, գրողի, գրողին, գրողներ և այլն:

3. Անցեալ գերբայը վերջանում է ած կամ ել: — Գր. ած, կարգաց-ել:

Անցեալ գերբայը գործ ածւելով եմ և իս բայի

հետ, կազմում է վաղակատար (գրած եմ, գրել եմ) և գերակատար (գրած եի, գրել եի) ժամանակները:

Ած վերջացած գերբայները, գործ ածւելով կը լինեի, լինեի և լինեմ բայի հետ, կազմում են սլայմանական և ստորադասական եղանակների բարդ ձևերը: — Գրած կը լինեի (պայման), եթէ գրած լինեի (ստորադաս): Եթէ գրած լինեմ (ստորադաս):

Կը, որ, երեք, երեք որ, թէ որ // դրւում են բայից առաջ:

Ած վերջացած գերբայը, իբրև ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխւում. իսկ մենակ՝ հոլովւում է գոյականների Ա. հոլովման պէս: — Գրած, գրածի, գրածից, գրածով, գրածներ և այլն:

4. Ապանի գերբայը վերջանում է ու: — Գրելու:

Ապանի գերբայը գործ ածւելով իս և եմ բայի հետ, կազմում է հաստատական անցեալ և ապանի ժամանակներ: — Կարգալու իս: Կարգալու եմ:

Ապանի գերբայը, գործ ածւելով լինեի և լինեմ բայի հետ, կազմում է ստորադասական եղանակի անկատարը և ապանին: — Գրելու լինեի: Գրելու լինեմ:

Վարժութիւն: — 1. Հետևեալ նախագասութիւններից ջոկեցը գերբայները և որոշեցէք նրանց տեսակը.

Ամենայն ոք ցանկանում էր լինել նրան բարեկամ: Մ. Ն. Գիր կարգալով գու գրեկում շատ նորանոր բան կ'իմանաս: Կարգացողի խելքն է կտրուկ: Ծատ. Նժոյգ ձի հեծած, պիլս ոլորած, ձեռու թուր առած՝ ես դաշտ կ'երթայի: Ա. Պատ. Աղօթարանը բացւեցաւ, ժամանակ է զարթնելու. Երթամախուռ, գոմշուկներս լծեմ գութան վարելու: Յ. Յովի.

2. Կազմեցէք գերբայներ հետևեալ բայերից.

Սովորել, նայել, կապել, կոտրել, զրօնել, ննջել, խընդառակ, ժամանակ, աղալ, հաճոյանալ, ստրկանալ, զայրանալ, ուղանալ, զլանալ, զարմանալ:

§ 62. ԲԱՅԻ ԶԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

գրում գրել գրած գրելու	եմ, ես, է, ենք, էք, են: էի, էիր, էր, էինք, էիք, էին:
Դր+	(կը, պիտի, եթէ, որ) եմ, ես, է, ենք, էք, են: էի, էիր, էր, էինք, էիք, էին: եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին: իր, եցէք: ող: ելիս:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 63. Բայի փոփոխումը եղանակներով, ժամանակներով և թւերով կոչւում խոնարհում (ըորյացիութեան):

Բայերն ունեն երեք խոնարհում, որոնք որոշում են անորոշ եղանակի վերջաւորութիւններով.

Ա. խոնարհում՝ ել:—Խօս-ել, երդ-ել:

Բ. խոնարհում՝ ալ:—Կարդ-ալ, խնդ-ալ:

Գ. խոնարհում՝ անալ:—Իմ-անալ, զարմ-անալ:

ԵՄ և ԼԻՆԵԼ ԲԱՅԵՐԸ

§ 64. ԵՄ և լինել բայերը կատարում են երկու

տեսակ պաշտօն՝ 1) կամ ցոյց են տալիս առարկայի էութիւնը կամ գոյութիւնը, 2) կամ օգնում են միւս բայերը խոնարհելու: Առաջին գէպքում այդ բայերը կոչւում են էական (ես եմ, գու կը լինես), իսկ երկրորդ գէպքում՝ օժանդակ կամ օզնական (գըում եմ, կարդացած կը լինես):

Եմ բայը պակասաւոր է, որովհետեւ ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան և անկատարը.

Ն Ե Ր Կ Ա Յ

Եղակի	եմ,	ես,	է:
Յողնակի	ենք,	էք,	են:

Ա.Ն Յ Ե Ա Լ Ա.Ն Կ Ա.Տ Ա.Ր

Եղակի	էի,	էիր,	էր:
Յողնակի	էինք,	էիք,	էին:

Եմ բայի պակաս ձևերը լրացնում է լինել պակասաւոր բայը. իսկ սրա պակաս ձևերը լրացնում է եղանիմ բայը:

ՍՍՀՄՍՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

Լինում եմ,	լինում ես,	լինում է,
լինում ենք,	լինում էք,	լինում են:

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

լինում էի, լինում էիր, լինում էր,
լինում էինք, լինում էիք, լինում էին:

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

եղայ, եղար, եղաւ,
եղանք, եղաք, եղան:

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

եղել եմ, եղել ես, եղել է,
եղել ենք, եղել եք, եղել են:

Գ Ե Ւ Ա Կ Ա Տ Ա Ր

եղել էի, եղել էիր, եղել էր,
եղել էինք, եղել էիք, եղել էին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

կը, պիտի՝
լինեմ, լինես, լինի (է),
լինենք, լինէք, լինեն:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

եղիր,
եղէք:

ԳՈՅՑՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

կը, պիտի՝
լինէի, լինէիր, լինէր,
լինէինք, լինէիք, լինէին:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

եթէ, որ, եթէ (թէ) որ՝

լինէի, լինէիր, լինէր,
լինէինք, լինէիք, լինէին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

եթէ, որ, եթէ (թէ) որ՝

լինեմ, լինես, լինի (է),
լինենք, լինէք, լինեն:

ԴԵՐԲԱՑ

Անորոշ լինել,
Ներկայ եղող,
Անցեալ եղած, եղել,
Ապառնի լինելու,

§ 65. Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(ել)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Բ Կ Ա Յ

Խօսում եմ, խօսում ես, խօսում է,
խօսում ենք, խօսում էք, խօսում են:

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Խօսում էի, խօսում էիր, խօսում էր,
խօսում էինք, խօսում էիք, խօսում էին:

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Խօսեցի, խօսեցիր, խօսեց,
խօսեցինք, խօսեցիք, խօսեցին:

Գ Ա Դ Ա Կ Ա Տ Ա Ր

Խօսել եմ, խօսել ես, խօսել է,
խօսել ենք, խօսել էք, խօսել են:

Գ Ե Բ Կ Ա Տ Ա Ր

Խօսել էի, խօսել էիր, խօսել էր,
խօսել էինք, խօսել էիք, խօսել էին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

ԿԸ, պիտի՝

Խօսեմ, խօսես, խօսի (է)
Խօսենք, խօսէք, խօսեն:

ՀՐԱՄԱՅՈՒՄՆ ԵՂԱՆԱԿ

Խօսիր,
խօսեցէք:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

ԿԸ, պիտի՝
խօսէի, խօսէիր, խօսէր,
խօսէինք, խօսէիք, խօսէին:

ՍՏՈՐԱԴԱՍՈՒԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝
խօսէի, խօսէիր, խօսէր,
խօսէինք, խօսէիք, խօսէին:

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝
խօսեմ, խօսես, խօսի (է)
խօսենք, խօսէք, խօսեն:

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ խօսել:
Ներկայ՝ խօսող:
Անցեալ՝ խօսած, խօսել:
Հպառնի՝ խօսելու:

§ 66. Բ. Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ
(ալ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

Կարդում եմ, կարդում ես, կարդում է,
Կարդում ենք, կարդում էք, կարդում են:

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Կարդում էի, կարդում էիր, կարդում էր,
Կարդում էինք, կարդում էիք, կարդում էինք:

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Տ Ա Ր

Կարդացի, կարդացիր, կարդաց,
Կարդացինք, կարդացիք, կարդացինք:
Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

Կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է,
Կարդացել ենք, կարդացել էք, կարդացել ենք:

Ք Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր,
Կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էինք:
Ա Պ Ա Ռ Ն Ի
Կը, պիտի՝

Կարդամ, կարդաս, կարդայ,
Կարդանք, կարդաք, կարդանք:
ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Կարդա, կարդացէք:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Կարդայի, կարդայիր, կարդար,
Կարդայինք, կարդայիք, կարդայինք:
Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Կարդայի, կարդայիր, կարդար,
Կարդայինք, կարդայիք, կարդայինք:

Ա. Պ. Ա. Ռ. Ն. Ի.

Եթէ, ոլ, եթէ (թէ) ոլ՝

կարդամ,	կարդաս,	կարդայ,
կարդանք,	կարդաք,	կարդան-

ԴԵՐԲԱՅ

Անորոշ՝ կարդալ:
 Ներկայ՝ կարդացող:
 Անցեայ՝ կարդացած, կարդացել:
 Ապառն՝ կարդալու:

§ 67. Գ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(անալ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

Հասկանում եմ, հասկանում ես, հասկանում է:
 Հասկանում ենք, հասկանում էք, հասկանում ենք

ԱՆ ՑԵԱԼ ԱՆԿԱՐ

Հասկանում էի, հասկանում էիր, հասկանում էր,
 հասկանում էինք, հասկանում էիք, հասկանում էինք

ԱՆՑԵԱԼ ԿԱՐԵԱԼ

Հասկացայ,	հասկացար,	հասկացաւ,
հասկացանք,	հասկացաք,	հասկացանք:

Վ Ա Դ Ա Կ Ա Տ Ա Ր

Հասկացել եմ,	հասկացել ես,	հասկացել է,
հասկացել ենք,	հասկացել էք,	հասկացել ենք:

Վ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Հասկացել էի,	հասկացել էիր,	հասկացել էր,
հասկացել էինք,	հասկացել էիք,	հասկացել էինք:

Ա Պ Ա Ռ Ն Ի

Կը, պիտի՝	հասկանամ,	հասկանայ,
	հասկանաս,	հասկանան,
	հասկանանք,	հասկանանք:

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հասկացիր,
 հասկացէք:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՆՑԵԱԼ

Կը, պիտի՝

հասկանայի,	հասկանայիր,	հասկանար,
հասկանայինք,	հասկանայիք,	հասկանայինք:

ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Հասկանայի,	հասկանայիլ,	հասկանար,
հասկանայինք,	հասկանայիք,	հասկանային:

Ա Պ Ա Ռ Ե Ւ Ի

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Հասկանամ,	հասկանաս,	հասկանայ,
հասկանանք,	հասկանաք,	հասկանան:

ԴԵՐԲԱՅ

Անորոշ՝ հասկանալ:	
Ենթայ՝ հասկացող:	
Անցեալ՝ հասկացած, հասկացել:	
Ապառնի՝ հասկանալու:	

ԿՐԱԽՈՐԱԿԱՆ ԲԱՑԵՐ

§ 68. Բոլոր ներգործական բայերը, ընդունելով
և (ու), դառնում են կրաւորական (§ 56) և խոնարհ-
ում են ներգործական բայերի պէս:—Գրլում եմ,
գրւում էի, գրւեցի, կը գրւեմ և այլն:

ԲԱՑԱՍՈՑԿԱՆ ԲԱՑԵՐ

§ 69. Ամեն մի բայ ուցասական (отрицатель-
նայ) դարձնելու համար սկզբից աւելացնում ենք չը-
կամ չ:—Չը խօսել, չեմ խօսում:

Բացասական բայի ձևերը կազմելու համար կա-
րիսր է զիտենալ եմ՝ պակասաւոր բայի բացասականը.

Ն Ե Ր Կ Ա Յ

Եզակի՝	չեմ,	չես,	չի (չէ):
Յոզնակի՝	չենք,	չեք,	չեն:

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Եզակի՝	չի,	չեր,	չէր:
Յոզնակի՝	չինք,	չեք,	չենք:

§ 70. Բացասական բայերը խոնարհում են հե-
տեւալ ձևով.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

Չեմ խօսում,	չես խօսում,	չի խօսում,
չենք խօսում,	չեք խօսում,	չեն խօսում:

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Չէի խօսում,	չէիր խօսում,	չէր խօսում,
չէինք խօսում,	չէիք խօսում,	չէին խօսում:

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Չը խօսեցի, չը խօսեցիր, չը խօսեց,
չը խօսեցինք, չը խօսեցիր, չը խօսեցինք
Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

Չեմ խօսել, չես խօսել, չի խօսել,
չենք խօսել, չէք խօսել, չեն խօսել
Գ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Չէի խօսել, չէիր խօսել, չէր խօսել
չէինք խօսել, չէիք խօսել, չէին խօսել
Ա Պ Ա Ռ Ն Ի

Չեմ խօսիլ, չես խօսիլ, չի խօսիլ
չենք խօսիլ, չէք խօսիլ, չեն խօսիլ
Կամ՝

Պիտի չը խօսեմ, պիտի չը խօսես, պիտի չը խօսի,
պիտի չը խօսենք, պիտի չը խօսէք, պիտի չը խօսենք
Կամ թէ՝

Չը պիտի խօսեմ, չը պիտի խօսես, չը պիտի խօսի...

ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մի խօսիր (խօսիլ),
մի խօսէք (միք խօսիլ):

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Չէի խօսիլ, չէիր խօսիլ, չէր խօսիլ,
չէինք խօսիլ, չէիք խօսիլ, չէին խօսիլ

Կամ՝

Պիտի չը խօսէի, պիտի չը խօսէիր, պիտի չը խօսէր,
պիտի չը խօսէինք, պիտի չը խօսէիք, պիտի չը խօսէինք

Կամ թէ՝

Չը պիտի խօսէի, չը պիտի խօսէիր, չը պիտի խօսէր...

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

չը խօսէի, չը խօսէիր, չը խօսէր,
չը խօսէինք, չը խօսէիք, չը խօսէինք

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

չը խօսեմ, չը խօսես, չը խօսի,
չը խօսենք, չը խօսէք, չը խօսենք

ԴԵՐԲԱՑ

Անորոշ՝ չը խօսել:
Ներկայ՝ չը խօսող:
Անցեալ՝ չը խօսած:
Ապառնի՝ չը խօսելու:

Վարժարին. — 1. Հետեւեալ նախադասութիւններից ջուղէք բացասական բայերը և որոշեցէք նրանց ձևերը.

Դու գեռ ծովը չը հասած, սպաւոր ես ինձ նման, եւ չը խօսեց Արաքսը, յործանը տւեց ահազին. Ռ. Պատ. Նա չը գիտէք՝ ինչ ասել է կարօտութւան արծաթի. այժմ զրկւած ամեն բանից, չունի անդամ հացի գին. Մ. Նալ.

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ բացասական բայերով.

Չիմանալ, չասել, չը յուսաւ, չը խնդալ, չը մնալ, չաշխատել, չը տեսնել, չը վախենաւ, չը զայրանաւ, չերգել չը հաւաքւել, չը լացւել, չը գրւել չը նստել, չը պառկել:

ԴԵՐԲԱՑՆԵՐԻՑ ԿԱԶՄԻԿԾ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 71. Ժամանակները գերբայներից կազմում են եմ և լինել պակասաւոր բայերի օգնութեամբ: Դերբայներից կազմած ժամանակներն են՝

Վաղակառար

Խօսած (Խօսել)

Հասկացած (հասկացել) { հմ, ես, է, հնք, էք, ես:
Կարդացած (կարդացել)

Խօսած (Խօսել)

Կարդացած (կարդացել) { էի, էիք, էր, էինք, էիք, էին:

Ապառնի

Խօսելու

Կարդալու { հմ, ես, է, հնք, էք, ես:
Հասկանալու

Անցեալ

Խօսելու

Կարդալու { էի, էիք, էր, էինք, էիք, էին:
Հասկանալու

Անցեալ-ապառնի

Խօսած

Կարդացած { կը լինեմ, կը լինես, կը լինի և այլն:

Հասկացած

Պայմանական անցեալ

Խօսած

Կարդացած { կը լինէի, կը լինէիր և այլն:

Հասկացած

Ստորադասական կատարեալ եթէ, որ՝

Խօսած

Կարդացած { լինիմ, լինիս, լինի և այլն:

Հասկացած

Ստորադասական զերակատար եթէ, որ՝

Խօսած

Կարդացած { լինէի, լինէիր լինէր և այլն:

Հասկացած

ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՑԵՐ

§ 72. Անցողական (побудительный) կոչւում են այն բայերը, որոնք ցոյց են տալիս ուրիշին մի բան անել տալը:

Ներգործական և չէզոք բայերը կարելի է անցողական դարձնել, եթէ նրանց կատարեալ ժամանակում ցից յետոյ աւելացնենք նել (=անել):—Կարդացնել, խօսեցնել, նստեցնել զարթնեցնել:

Իսկ նել և չել վերջացած բայերը, որոնք կատարեալ ժամանակում չ'ունեն ց, անցողական դառնալիո՞ն և չ' մասնիկների փոխարէն ընդունում են ցն:—

Մտնել—մտցնել, փախչել—փախցնել:

Մի քանի նել վերջացած բայեր դառնում են անցողական տալ բայի օգնութեամբ:—

Գտնել—գտնել տալ, տանել—տանել տալ:

Ներգործական բայը տալ բայի հետ միասին կարող է գործ ածել անցողականի տեղ:—Կարդալ տալ զրել տալ:—Սոսկալի զէնքը բոնած մեր գլխին՝ կուլ տալ է տալիս արտասունք առատ: Ո. Պատ.

Իսկ եթէ տալ բայն աւելացնենք անցողական բային, կը ստանանք կը կին անցողական:—Կարդացնել տալ, խօսեցնել տալ:

Վարժութիւն:—Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ անցողական բայերով.

Նստեցնել, սովորեցնել, բարկացնել, հասկացնել, ապ-քեցնել, մտցնել, հանգստացնել տալ, վախեցնել տալ:

ԱՆԴԵՄ ԲԱՑԵՐ

§ 73. Անդէմ (безличный) կոչւում են այն

բայերը, որոնք գործ են ածւում միայն եզակի երրորդ դէմքով:—Պէտք է, հարկ է, բաւական է, վայել է և այլն:

Կան չէզոք և կրաւորական բայեր, որոնք գործ են ածւում անդէմի մաքով:—Երեսում է, թւում է, մնում է, ասւում է, լսում է, անձրեսում է, մթնում է, լուսանում է և այլն:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՑԵՐ

§ 74. Այն բայերը, որոնք շեղւում են խոնարհումների ընդհանուր կանոնից, կոչւում են անկանոն (неправильный):

Անկանոն են՝

1) Գալ բայը, որի կատարեալը, հրամայականը, ներկայ և անցեալ գերբայները կազմւում են ուրիշ արմատից:—

Կատ. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան: Հրամ. եկ (արի), եկէք:

Դերը. ներկայ՝ եկող: Դերը. անդեալ՝ եկել (եկած):

2) Ուտել բայը, որի կատարեալը, հրամայականը և անցեալ գերբայը կազմւում են ուրիշ արմատից:—

Կատ. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան:

Հրամ. կեր, կերէք:

Դերը. անցեալ՝ կերել (կերած):

3) Լալ և տալ բայերը, որոնց սահմանականի ներկան և անկատարը ում վերջաւորութեան փոխա-

ըէն՝ անորոշ գերբայի վրա ընդունում են իս:—
Լալ-իս եմ, տալ-իս եմ: Լալ-իս էի, տալ-իս էի:

Սահմանականի ներկայում և անկատարում նոյն
իս վերջաւորութիւնը ընդունում է և զալ բայց:—
Գալ-իս եմ, գալ-իս էի:

4) Ունենալ և զիտենալ բայերը, որոնց սահմա-
նականի ներկան և անկատարը գրաբար ձեռվ է լի-
նում:—

Ներկայ	Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին:
	Գիտեմ, գիտես, գիտէ, գիտենք, գիտեք, գիտեն:
Անկատ.	Ունէի, ունէիք, ունէր, ունէինք, ունէին: ունէին:
	Գիտէի, գիտէիք, գիտէր, գիտէինք, գիտէին: գիտէին:

Ծանօթ.—Ունենալ ներկայում գործ է ածւում նաև
ունեմ, ունես, ունէ, ունենք, ունէք, ունեն:

5) Կամ պակասաւոր բայը, որ գործ է ածւում
գրաբարի ձեռվ և ունի միայն սահմանականի ներկայ
և անկատար ժամանակները:—

Ներկայ՝ կամ, կաս, կայ, կանք, կաք, կան:

Անկատ՝ կայի, կայիք, կար, կայինք, կայիք, կային:

Ծանօթ.—Նել, նալ, չել վերջացած բայերը կատա-
րելում, հրամայականում և անցեալ ղերբայում կորցնում
են և և չ տառելու:—Գտնել, գտայ, գտիր, գտած:

Դառնալ, գարձայ, գարձիր, գարձած:

Փախչել, փախայ, փախիր, փախած:

§ 75 ԲԱՅԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Եմ բայի եզակի երրորդ և յողնակի երկրորդ
գէմքը ներկայում գրւում է է-ով:—Նա է, կարդում
է: Գուք էք, կարդում էք:

2) Եմ բայի անկատարի բոլոր ձեերը գրւում են
է-ով:—Էի, էիք, էր, էինք, էիք, էին:

3) Անալ վերջացած բայերի անցեալ կատարեալի
եզ. առաջին գէմքում լսում է ցա, բայց գրւում է
ցայ (հասկացայ), իսկ երրորդ գէմքը վերջանում է
ցաւ (հասկացաւ) (§ 12—դ):

4) Կը մասնիկը գրւում է բայից ջոկ և խառը:—
Կը գրեմ, կըգրէի:

Իսկ երբ բայը ձայնաւոր տառով է սկսւում, կը
մասնիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ դըր-
ւում է ապաթարց (‘) նշանը:—Կ'ասեմ, կ'երթայի:

5) Ել վերջացած բայերի ստորագասական ա-
պանին իր վերջում ընդունում է Եմ բայի ներկայի
ձեերը (§ 64):—(Որ, եթէ) գրեմ, գրես, գրէ (գրի),
գրենք, գրէչ, գրեն:

Իսկ ստորագասական և պայմանական անկատա-
րը ընդունում է նոյն Եմ բայի սահմանական անկա-
տարի ձեերը:—(Որ, եթէ, որ) պիտի գրէի, գրէիր,
գրէր, գրէինք, գրէիք, գրէն:

6) Ալ և անալ վերջացած բայերի ապանին ե-
զակի երրորդ գէմքում վերջանում է այ:—(Կը, եթէ,
որ) կարդայ, (Կը, եթէ, որ) հասկանայ:

7) Վերեկի ուղղագրութեան ճետ չը պէտք է շփո-
թել ալ վերջացած բայերի հրամայականը, որ եզ-

կիում վերջանում է ա շեշտով, առանց յ ստառի:—
Կարգա՛, գնա՛:

Հրամայականի յոպնակին բոլոր բայերի համար
ընդունում է էք վերջաւորութիւնը շեշտով:—Գրեցէք,
կարգացէք, հասկացէք:

8) Ներկայ գերբայի ող վերջաւորութիւնը գըր-
ում է ո-ով:—Գրող, կարգացող:

9) Զը մասնիկը գրւում է բայից ջոկ և խառը:—
Զը գրել, չըգրեցի:

Իսկ երբ բայը սկսւում է ձայնաւորով, չը մաս-
նիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ գրւում
է (':—Չ'ասել, չ'ասացի:

10) Ներկայում և անկատարում չ միանալով եմ
բայի հետ, գրւում է առանց ('):—Չեմ, չես, չէ (չի),
չենք, չեն. չէի, չէիր, չէր, չէնք, չէնը, չէիը, չէին:

11) Բաղադրեալ բայ կազմող բառերը գրւում են
միմեանցից ջոկ:—Պար գալ, կուլ տալ, ձայն տալ,
աչք ածել:

12) Բարդ բայ կազմող բառերը միանում են մի-
մեանց հետ ա յօդակապով:—Պատւասիրել, վարձա-
տըրել:

ՄԱԿՐԱՅ

§ 76. Առարկաների գործողութեան կամ դրու-
թեան հանգամանքները ցոյց տւող բառերը կոչւում
են մակրայ (հարթութեան):

Մակրայները լինում են՝

1) Ցնղական՝ ուր, որտեղ, հեռու, մօտիկ, այս-
տեղ, այնտեղ, վերև, ներքև, ներսը, դուրս և այլն:

2) Ժամանակական՝ երբ, այժմ, յետոյ, այսօր,
երէկ, վաղուց, երբեմն, երբէք, միշտ և այլն:

3) Որակական՝ ինչպէս, այսպէս, այդպէս, այն-
պէս, սաստիկ, սիրով, եղբայրաբար, հայերէն և այլն:

4) Քանակական՝ որչափ, ինչքան, այսքան, այդ-
քան, այնքան, շատ, սակաւ, քիչ և այլն:

Շատ մակրայներ առաջ են գալիս՝ ա) գոյական-
ներից, բ) ածականներից և գ) գերանուններից:

ա) Գոյականներից առաջ եկած մակրայները, ե-
թէ տեղական են, կարող են հոլովել Ա. հոլովման
պէս:—Ներև, վերևի, վերենից, վերեսով և այլն:

բ) Ածականները, բայի վրա գրւելով՝ դառնում
են մակրայ:—Լաւ երգել, բարձր խօսել, խոր մտածել:

Որակական ածականներից առաջ եկած մակրայ-
ներն ունեն համեմատութեան աստիճաններ:—Լաւ եր-
գել, անելի լաւ երգել, ամենից լաւ երգել:

գ) Դերանուններից կազմւած մակրայները, ըն-
դունելով պէս վերջաւորութիւնը, ունենում են գոր-
ծիական հոլով:—Այսպէս—այսպիսով:

§ 77. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Երէն վերջաւորութեան մէջ ձայնաւորներից
առաջինը լինում է և, իսկ երկրորդը՝ է:—Հայերէն,
ռռւսերէն:

2) Պէս և օրէն վերջացած մակրայները գրւում
է-ով:—Վերջապէս, բարոյապէս, կուրօրէն:

3) Երբէք գրւում է է-ով:

Վարժուրին:—1. Հետեւալ նախադասութիւններից ջուկեցէք մակրայները և որոշեցէք նրանց տեսակը.

Կոնճնկ, ուստի կու գաս, ծառայ ևմ ձայնիդ: Ժող.
Կարկաջահոս աղբիւրն այնաեղ թաւալում էր մարդարիտ.
Նա յըստակ էր, որպէս բիւրեղ: Ս. Շան. Արի, բարձրացիր
հոսութեան փոշուց, դու իմ հայ լեզր՝ մոռացւած վաղուց: Ա. Նազ.
Ո՞ւր էք վազում, զուր էք վազում, Էյ սարսափած երէններ:
Յար. Թամ. Մնացի մենակ, հոգիս վրդովլւած: Եւ այնու-
հետեւ ամեն իրիկուն մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն. Ա. Պատ.
Լաւաշակերտը լաւ է սովորում: Վատ մարդը Զատկին էլ վատ-
կը լինի: Ժող. Մանիր թելեր հաստ ու բարակ: Ա. Ա. Ա. Ա.
Ճըլը՝ ւըզտ, ճըլը՝ ւըզտ, ճախարակ, ևս հաստ մանեմ, դու բա-
րակ. շատ մանողին շալ շապիկ, քիչ մանողին չիթ շապիկ:
Յար. Թամ.

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ
մակրայներով.

Գիշերը, ցերեկով, ամառը, միշտ, առաւօտը, մայիսին,
վերև, ներքև, բաղցը, եղբայրաբար, այսքան, սակաւ,
երեք, բոլորովին, հայերէն, մանր-մանը, բարձր-բարձր
օրէցօր, էգուց:

ՆԱԽԴԻՐ ԵՒ ՑԵՏԱԴԻՐ

§ 78. Այն հոլովառու բառերը, որոնք ցոյց են
տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնը,
կոչւում են նախդիր (պրեծոր) և յետաղիր (ուսու-
լոց):—

Աշակերտը գնաց ղէպի (նախդիր) տուն:
Հայրը գնեց որդու համար (յետաղիր) մի գիրք:
Ինչպէս տեսնում ենք, նախդիրը գաւում է հո-
լովական բառից առաջ, իսկ յետաղիրը՝ հոլովական
բառից յետոյ:

Նախդիրներ՝ առանց, գէպի, մինչև, բացի...
Յետաղիրներ՝ համար, հետ, մօտ, մէջ...
Փոյականներից առնւած յետաղիրները հոլովում
են գոյականների Ա. հոլովման օրինակով:—

Մէջ, միջի, միջից, մէջով, մէջերը և այլն:
Տակ, տակի, տակից, տակով, տակերը և այլն:
Վրայ, վրայի, վրայից վրայով, վրաները և այլն:
Կան բառեր, որոնք կարող են լինել և յետա-
ղիր և մակրայ: Եթէ բառը գոյականի մօտ է
գրւած, յետաղիր է. իսկ եթէ բայի մօտ է
մակրայ է:

Սեղանի վրա (յետաղիր) գիրք է գրւած:
Գիրքը գրեց վրան (մակրայ):

§ 79. ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԵՒ ՅԵՏԱԴԻՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

- 1) Մէջ գրւում է չովի, թէպէտ լսւում է չօլովելիս՝ է առաջ եղակիումդանում է իւ. - Միջիւ, միջից, միջով և այլն:
 - 2) Վըայ կարելի է զրել և առանց յիւ:
 - 3) Իզրեւ գրւում է ըսով, բայց կարդացւում է իփրեւ:
 - 4) Դէպի զրւում է էսով:

Վարդութիւնն.—1. Հետևեալ նախաղասութիւններից ջոկատը նախաղիքները և յատաղիքները.

Դէպի մէր, ինձ ասա, թոշում ես այդպէս արագ։ Դոդ-
Խոր ձորի մէջ գնում եմ ես. պարզ զիշեր է աստեղազարդ։
Գ. Բար. Մայրենի լեզու, մայրենի բարբառ, ախորժ, ընտանի իմ
հոգու համար։ Ա. Նազ. Ճաշից յետոյ եղբայրը քրոջ հետ-
պնաց այգին Եղբայրս ծառի տակին, սաղմոսը կաան տա կին։
Մինչև սեպտեմբեր վերջանում ին ամառային արձակուրդ-
ները Բացի ամառային ամիսներից, մենք միշտ գնում ենք
ուսումնարան։ Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ, ինձ-
նից փրկութիւն դու բնաւ մի յուսալ։ Տղայ, աղջիկ ուրախ,
զւարթ՝ փթլթեցան զերդ մայիսի վարդ։ Ո. Պատ.

2) Կազմեցէք մի քանի նախագասութիւններ, որոնց մէջ լինեն հետևեալ նախդիրները և յետափիրները.

Դէմ, իբր, զատ, մօտ, ներքեց, փոխանակ, մինչև,
դէպի, բացի, վերեց, առաջ (առջև), յիտոյ, համար, տակ,
վրա:

ՀԱՂԿԱԳ

- § 80. Նախադասութիւնները և նախադասութեան անդամները միմեանց հետ կապող բառերը կոչւում են շաղկապ (coiozъ):—

Ես գրում եմ, իսկ դու կարդում ես:

Գիրքը եւ մատիտը սեղանի վրա են:

Ամենագործածական շաղկապներն են՝ Եւ (և) կամ ու, նաև, այլեւ, էլ, կամ (կամ թէ), եթէ (թէ), որ, թէեւ (թէ պէտ), այլ, որպէս զի, քան (քան թէ) և այլն:

- 1) Եւ կարող է զըւել և:
- 2) Ու շաղկապից առաջ բառի վերջում ը-ի տեղ
զըւում է ն:-Հայրն ու որդին:
- 3) Թէ, թէնւ, թէպէտ զըւում են է-ով:

Վարձութիւն.—1. Հետեհալ նախադասութիւններից ջուկեցք շաղկապները.
Մարդ և անասում, գաղան և թռչուն, ամենքն էլ իւրանց գործին են զնում: Մերկ ու թուլակազմ եկար այս աշխարհ և մօրդ զըկում կ'առնէիր հանգիստ: Բայց միայն, աւանդ, մահը տարածամ տառապեալ մօրդ զբաւ գերեզման-դու տեսնել ես երկնքում պայծառ լուսին ծագելիս, կամ թէ կանաչ տերսի մէջ կարմիր ծիրան փայլելիս: Թէկ որովհուսայի ես զարդ, բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդք 2. Գրեցք մի-մի նախադասութիւն հետեհալ շաղկապներով.

իսկ, բայց, ընդհակառակը, այսպէս—լուզուս, այսպէս
—ինչքան, քան թէ, կամ, արդեօք, եթէ, միայն, թէն, ճիշտ
դիցուք, ինչքան որ, որովհետեւ, որպէս զի, ուրեմն:

Ա՛յս, թոիր, ծիծեռնակ, ծնած տեղու աշաւարակ:
Որքան դժբաղդ եմ ես, ա՛յս:
Հերոսը, աւա՛զ, այլ ևս չկայ:

ՄԻԶԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 82. Այս հնչիւնները և բառերը, որոնք արտայայտում են մեր զգացմունքներն ու կիրքը, կոչում են միջարկութիւն կամ ձայնարկութիւն (մշյուտիւն):

- Միջարկութիւններն արտայայտում են՝
 1) Ուրախութիւն՝ ան, ուհ, էֆ:
 2) Յաւ՝ վախ, վայ, օ, ո՞ն, ախ:
 3) Ափսոսանք՝ ափսոս, աւազ:
 4) Բաղձանք՝ երանի թէ, ուր էր թէ:
 5) Զարմանք՝ վահ, օ, ո՞ն:
 6) Երկիւղ՝ վայ թէ, մի գուցէ:
 7) Կոչ՝ ավ, ա, էյ, հէյ, տօ, ծօ, այ:
 8) Խրախոյս՝ կեցցէ, հա, ապրիս:

Կան նմանաձայն ձայնարկութիւններ, որոնք արտայայտում են անշունչ առարկաների և կենդանիների հնչիւնները: — Ձը՞նդ, զը՞նդ, չը՞նկ, չը՞նկ. ձը՞նդ, մեաւ (կատու). համ-համ (շուն) և այն:

ՄԻԶԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈԳՐՈՒԹԻՒՆՆԸ

1) Միջարկութիւնների գլխին գրւում է երկար
(՝) կամ շեշտ (՝): — Ա՛յս, վայ, տօ:

2) Միջարկութիւնը, եթէ գրւած է նախադասութեան սկզբում կամ վերջում, միւս անդամներից բաժանւում է ստորակէտով: Իսկ եթէ նախադասութեան միջին է, երկու կողմից աւնում է ստորակէտ: —

Վարժուրին: — 1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք միջարկութիւնները:

Զայն տներ, ովք ծովակ, ինչու լուս ես: Բաթիկ ես լսեցի մի անուշ ձայն, ախ, ափսոս, որ երազ էր: Ս. Նան, Ուխանյ, ուխանյ, սիրուն հովիւ, քունդ անուշ: Դ. Աղ. Երանի, գարուն լինի տարին բոլոր ժամանուկ ժամը տւին: — ամանդո, տանդո. կովը կթենը, թը՛ռ, թը՛ռ կաթ տայ: Յ. Յ. Բաղէ, թը՛ռ, բազէ, թը՛ռո... Պառաւ նանը զարթնում է, տա, տա, պա, պա, պա: Ղ. Աղ.

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ միջարկութիւններով:

Կեցցէ, ապրիս, վայ, մի գուցէ, էյ, այ, երանի, տօ, օ, ծիւ, ծիւ:

Յ Ա Խ Ե Լ Ի Ա Ծ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 1. ՀԱՄԱՌՈՅ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Համառօտ կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կան միմիայն գլխաւոր անդամներ:—Աշակերտը գրում է:

Իսկ ընդարձակ կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ բացի գլխաւոր անդամներից՝ կան և երկրորդական անդամներ:—Աշխատասէր աշակերտը դասարանում գրում է իր դասը:

§ 2. ԴԻՄԱԽՈՐ ԵՒ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐ: Դիմաւոր կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշուում է կամ իմացւում է մըտքով:—Աստւած ծուլութիւն չի սիրում երբէք: Խելօք մանուկներ, (ղուզ) ձեր գրքերն առէք:

Իսկ անդէմ կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ ենթական անյայտ է:—Ասում են, որ ամենայն մարդ մի աստղ ունի երկնքում: Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին: Ամպել է, ձիւն չի գալիս:

§ 3. ՊԱՐԶ ԵՒ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ:

Պարզ կոչւում է այն նախադասութիւնը, որ միայն մի պարզ միտք է արտայայտում:—Մըջիւնը բերնով իր կերն է տանում:

Իսկ բարդ կոչւում է այն նախադասութիւնը, որ կազմւած է երկու կամ աւելի նախադասութիւններից:—Ինչ կը ցանես, այն կը հնձես:

Բարդ նախադասութիւնը կազմւում է՝ զլիաւոր ու երկրորդական, միաւորեալ, յաւելեալ եւ միջանկեալ նախադասութիւններից:

§ 4. ԳԼԽԱԽՈՐ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ: Գլխաւոր կոչւում է այն նախադասութիւնը, որից կախում ունի ուրիշ նախադասութիւն. Իսկ երկրորդական կոչւում է այն նախադասութիւնը, որ կախում ունի գլխաւորից և պարզաբանում է նրա մի որեիցէ անդամը:—Մանիք թելեր հաստ ու բարակ, որ ես հոգամ իմ ցաւեր: Ղ. Աղ.

Այս օրինակում գլխաւոր նախադասութիւնն է Մանիք թելեր հաստ ու բարակ. իսկ երկրորդականը՝ որ ես հոգամ իմ ցաւեր:

Երկրորդական նախադասութիւնը գլխաւորապէս լինում է.

ա) Յատկացուցիչ:—Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչւում է Կուր:

Եթէ այս բարդ նախադասութիւնը կրճատենք, երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը կը դառնայ յատկացուցիչ բառ:—Թիֆլիսի միջով անցնող գետը կոչւում է Կուր:

բ) Լրացուցիչ:—Որդին լսում է, ինչ որ ասում են ծնողները:

Եթէ այս բարդ նախադասութիւնը կրճատենք, երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը կը դառ-

նայ լրացուցիչ բառ:—Որդին լսում է ծնողների ասածը:

Գ) Պարագայական:—Որտեղ կայ սէր, այստեղ կայ միաբանութիւն: Զիւնը հալւում է, հէնց որ տարանում է եղանակը. Ամեն մարդ աշխատում է, որ առաջ գնայ:

Եթէ այս բարդ նախադասութիւնները կրճատենք, երկրորդական պարագայական նախադասութիւնները կը գառնան պարագայական բառեր:—Սէր եղած տեղում կայ միաբանութիւն: Զիւնը հալւում է եղանակը տաքանալուն ուժա: Ամեն մարդ աշխատում է առաջ գնալու:

Ինչպէս տեսանք, երկրորդական նախադասութիւնը բաժանւում է զլխաւորից ստորակէտով. իսկ եթէ նա լինում է զլխաւոր նախադասութեան անդամների մէջ, երկու կողմից է ստորակէտ առնում:

Երկրորդական նախադասութիւնը զլխաւորից բաժանելու համար երբեմն դրւում է բութ (‘).—Պատմեց պառաւին՝ թէ ինչ բան տեսաւ:

Բութը բացի դրանից դրւում թւարկութիւնների, բացատրութիւնների ու բառերի զեղջման ժամանակ:—Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն և ձմեռ: Նա բերաւ իր հետ մի ոսկէ ձկնիկ՝ ձկանց արքայի դուստրը գեղեցիկ: Մարտը տալիս է ձնծաղիկ. ապրիլը՝ կապոյտ մանուշակ: Դ.Ադ.

Բութը դրւում է նաև, երբ ուզում ենք չը շփոթել նախադասութեան զանազան անդամները միմեանց հետ:—Եւ նա ուժասպառ՝ խոտերի միջին՝ յուսահատ, տխուր լալիս էր անվերջ: Յար. Թոնմ.

§ 5. ՄԻԱԼԻՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ: Միաւրեալ կոչւում է այն նախադասութիւնը, որը կազմւած է երկու կամ աւելի պարզ նախադասութիւնների միաւորութիւնից:—Արեն էլ վաղուց ելաւ, բարձրացու:

Այս նախադասութիւնը կազմւած է երկու պարզ նախադասութիւնների միաւորութիւնից՝ 1) Արեն էլ վաղուց ելաւ, 2) Արեն էլ վաղուց բարձրացաւ:

Միաւորեալ նախադասութեան մէջ մի ենթակայի հետ կարող են լինել երկու կամ աւելի ստորոգեալներ, մի ստորոգեալի հետ՝ երկու կամ աւելի ենթականեր, մի ենթակայի կամ ստորոգեալի հետ՝ երկու կամ աւելի միաւեսակ երկրորդական անդամներ:—Զի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով գնացին իրանց գործին շտապով: Արել յաղթեց ամպերին, շողքը ձգեց սարերին: Դ.Ադ. Խեղճ որբիկը չ'ունէր հայր, մայր, եղբ այր ու քոյր: Նա անտուն, անտէր, քաղցած ու ծարաւ թափառումէ փողոցներում: Դեկտեմբերին, յուննարին և փետրւարին ձմեռ է լինում:

Միաւորեալ նախադասութեան մէջ վերջին և նախավերջին միաւեսակ անդամների մէջ դրւում է ու կամ եւ. իսկ միւս միաւեսակ անդամները բաժանւում են իրարից ստորակէտով:

§ 6. ՅԱԼԻԼԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ: Յաւելեալ կոչւում է այն նախադասութիւնը, որ կազմւած է ուրիշի բառերից:—Մի օր տգեղն ասում է միւսին, «Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»: Ո. Պատ.

Այս օրինակում Մի օք տգեղն ասում է միայն
պլատոռ նախադասութիւն է, իսկ «Երթանք ծովի
ափ, քոյրիկ, միասին»՝ յաւելեալ:

Յաւելեալ նախադասութեան սկզբում դրւում է
միջակէտ եւ չակեղոտ («»), իսկ վերջում՝ չակերտ և
վերջակէտ (»»):

Հարց ու պատասխանների ժամանակ, չակերտ-
ների տեղ կարող է գործ ածւելանցատման զիշ (—), որ
դրւում է յաւելեալ նախադասութեան առաջ, օրինակ:

— Են մէկ հաւ կար, ուր գնաց:

— Ծարաւ աղբըում կուլ գնաց:

Ծանօթ.—Միջակէտը դրւում է նաև անկախ նա-
խադասութիւնների մէջ:—Աշուն է խորին. ծիծառը թռաւ.
անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ:

Չակերտների մէջ են առնելում նաև գրւածքների և թեր-
թերի անունները:—«Վէրք Հայաստանի» վէալը գրել է Խ.
Արովեանը: «Մեր հայրենիքը» լաւ երգ է: «Բազմավէպը»
հրատարակում է սուրբ Ղաղարի վանքում:

§ 7. ՄԻԶԱՆԵԱԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ, ՄԻՋԱՆԿԵԱԼ
կոչւում է այն անկախ նախադասութիւնը, որ՝ իբրև
ծանօթութիւն, գցւած է մի ուրիշ նախադասութեան
մէջ:—Պետերբուրգը, ինչպէս յայտնի է, Ռուսա-
տանի մայրաքաղաքն է: Եւ գնաց տեսաւ (բայց ի՞նչ
տեսնի լաւ, որ առոտը լինի եւ ոչ անիրաւ), հին
խուղի շէմքում պառաւը նստած:

Միջանկեալ նախադասութիւնը միւսներից բա-
ժանւում է ստորակէտներով կամ փակազնով (»):

Վարժուքին:—Վերլուծեցէք հետեւեալ նախադասութիւն-
ները.

Աշունը եկաւ: Թափւեցաւ սաղարթ: Լոեց: Ամպերը
եկան ծածկեցին: Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
հոգով գեռ արի, գլխով ալեոր: Մօր համար բոլոր որդիքը
սիրելի են: Անձրևում է: Մթնում է: Վարդը, մանուշակը և
մեխակը անուշահոտ ծաղիկներ են: Ահա մէկ օք էլ ծերը
զնաց ծով, որ ծուկը որսայ իր մաշւած ցանցով: Սիրուն
թիթեռ, ինձ ասա՞ թէ ինչով ես դու ապրում: Այս աշա-
կերաւ, որ աշխատում է, արժանի է գովեստի: Որտեղ հաց,
այստեղ կաց: Այդ զարհութելի ձայնիցը դաժան (ոչ որոտ-
մունք էր և ոչ էլ գաղան) լեռներ ու ձորեր դզբդում էին:
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից. «Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ
ինձ մահից»:

§ 8. ՀԱՐՑԱԿԱՆ, ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ԵՒ ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԵՐ: Հարցական կոչւում է
այն նախադասութիւնը, որի մէջ կայ հարց: — Ինչու ձը-
կանց հետ պար չես բանում մանկական: Հիմի էլ լոենք:

Հարց պարունակող բառի գլխին գրւում է հար-
ցական նշան (°):

Բացականչական կոչւում է այն նախադասու-
թիւնը, որի մէջ կայ բացականչութիւն: — Օ՛, ծանր
հոգսերի խղճուկ զաւակներ, որքան համբերող, բաշ
է ձեր հոգին: Ծատ.

Բացականչութիւն պարունակող բառի գլխին
գբւում է երկար ('):

Պատմական կոչւում է այն նախադասութիւնը,
որի մէջ, առանց հարցի կամ բացականչութեան, հան-
դարտ պատմւում է մի բան: — Զիւն էր գալիս փա-
թիլ-փաթիլ, հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ: Ա. Աղ.

ՅԱՆԿ

Երես

§§ 1—3.	Հնչիւններ և տառեր	5
§§ 4.	Վանկ և բառ	7
§ 7.	Բառերի կազմութիւնը	9
§§ 8—16.	Ուղղագրական գիտելիքներ	10
§ 17.	Տողագարձի կանոնները.	20
§§ 18—19.	Նախագասութիւն	21
§ 20.	Բանի մասեր.	26
§§ 21—22.	Առարկայ և նրա տեսակները	27
§§ 23—34.	Գոյտկան անուն և նրա հոլովումները	28
§ 35.	Անկանոն հոլովում.	37
§ 36.	Փոխառող և կորչող զրեր	39
§ 37.	Գոյականների ուղղագրութիւնը	40
§§ 38—40.	Ածական անուն և նրա փոփոխումները	41
§ 41.	Ածականների ուղղագրութիւնը	43
§ 42.	Դերանուն և նրա տեսակները	45
§ 43.	Դերանւանական յօդեր	45
§§ 44—50.	Դերանունների հոլովումը.	46
§ 51.	Դերանունների ուղղագրութիւնը.	50
§ 52.	Թւական անուն և նրա տեսակները	51
§ 53.	Թւականների փոփոխումները.	53
§ 54.	Թւականների ուղղագրութիւնը	54
§§ 55—60.	Բայ. սեռ, ժամանակ, դէմք, թիւ	55
§ 61.	Դերբայ	60
§ 62.	Բայի ձեերի կազմութիւնը	62
§§ 63—67.	Խոնարհում	62
§ 68.	Կրաւորական բայեր	72
§§ 69—70.	Բացասական բայեր և նրանց խոնարհումը	73
§ 71.	Դերբայներից կազմւ. բաղադր. ժամանակներ	76
§ 72.	Անցողական բայեր	78
§§ 73—74.	Անդէմ և անկանոն բայեր	78
§ 75.	Բայերի ուղղագրութիւնը	81
§ 76.	Մակրայ և նրա ուղղագրութիւնը	83
§ 78.	Նախդիր և յետազիր	85
§ 79.	Նախդիրների և յետազիրների ուղղագրութիւնը	86
§ 80.	Շաղկապ և նրա ուղղագրութիւնը	87
§ 82.	Միջարկութիւն և նրա ուղղագրութիւնը	88
§§ 1—8.	Նախագասութիւնների տեսակները	90

ՀՀ Ազգային գրադարան



NL0248139

6327